

ပြုပရာကယ့် လူမှုရောင်

နှစ်ပုဂ္ဂန်
နှစ် ပိပစ္စဂိုလ်
ပိပစ္စဂိုလ်
နှုန်းပိပစ္စ

၁၃၆၄ ၁၂

ဆောင်ရွက် မြတ်သန အမြတ်သန ဦ. နောက်လျှော့



Эчмадзина
и древнія Армянскія Церкви

SERIE A

Etschmiadzin
und die ältesten
ARMENISCHEN KIRCHEN

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՉ

Հայաստանը հնութիւնների աշխարհ է. դոցա մէջ
առաջի տեղը բռնում են չէն և անշէն վանքեր ու եկե-
ղեցիներ, աւերակ բերդեր, գղեակներ, քարվանսարաներ,
ընդարձակ գերեզմաններ ելն. Կան աւելի հին՝ նախա-
քրիստոնէական և նախապատմական մնացորդներ. թէ մի
և թէ միւս շրջանից ընդարձակ ջրամբարների, մեծամեծ
ճարտարաշէն ջրանցքների, հաղորդակցութեան գեղեցիկ
ճանապարհների մնացորդները պատկառանք և հիացում
ներշնչող ձեռնարկութիւններ են. Դոքա բոլորը մի բան են
ապացուցանում, որ այդ երկրի վրայ ապրող ժողովուրդ-
ները մտածել են ոչ միայն առօրեայ խղճուկ կեանքի մա-
սին, անցրել են օրերը ոչ միայն, ենթակայ դարերի ոգուն,
պատերազմներ մղելով և պաշտպանուելով, այլ որ նոքա
ունեցել են յառաջադիմելու մեծ պահանջ, խրախուսել են
արուեստները, առաջ են մղել քաղաքակրթութիւնը և վա-
յելել նրա լաւագոյն պտուղները. Հնութեան առանձին
վերցրած մի յիշատակարանով, եթէ նա իւր որ և է յառ-
կութիւնով ուշադրութեան արժանի է, գրաւուսում ենք,
երբեմ յափշտակւում. ապա փորձենք ի մի հաւաքել մի
քանի այդպիսի յիշատակարաններ, գասաւորել որ և է
սիստեմով, համեմատել իրար հետ, որքան աւելի զօրեղ
և աւելի կենդանի կլինի նոցանից ստացած տպաւորու-
թիւնը. Հայաստանում շատ քիչ ուշադրութեան արժանի
հնութիւն կայ, որ կամ մասնագէտ ուսումնասիրողի և
ճանապարհորդի կամ պատահական գրողի ուշադրութիւ-

նից խուսափած լինի, բայց շատ քիչ բան են այնքան հարուստ յիշատակարաններից մասնաւորապէս առնուել և քննուելու Այդպիսի մասնաւոր և խիստ շահագրգիռ խընդիրներից ենք կամարում հայ ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը, ցոյց տալով նրա իրական պատկերը և նրա կապը ընդհանուր ճարտարապետութեան հետո Այս փորձը կամենում ենք անելու Մենք որոշեցինք ըստ կարելոյն ճիշտ բայց համառօտ տեղեկութիւններ հաւաքել ամենից առաջ հայ եկեղեցիների մասին, ստուգել նոցապատմական և արձանագրական ազգիւրները, որո՞ւ շրջանաների վերածելով՝ տալ գոցա նկարագրութիւնը Որքան էլ ցանկալի էր ունենալ միաժամանակ նաև շինութիւնների մասին զուտ տեխնիքական բացատրութիւններ, համապատասխան նկարներով և յատակագծերով, բայց դա մեր ոյժից վեր և մասնագէտ ճարտարապետի գործ է։ Եթէ օգնութիւն ունեցանք, այդ էլ կկատարենք. առ այժմ՝ կը փորձենք գոնէ ամեն անդամ տալ նկարագրած շինութեան լուսանկար պատկերը։

Առաջի փորձը կատարում ենք սկսելով Զուարքնոց եկեղեցու նկարագրութիւնով, որի չնորհիւ իսկապէս ըսկեցինք հետաքրքրուել առաջագրած խնդրով և նրանով զբաղուելու Այդ եկեղեցին Հայաստանի մինչև եօթներորդ դարի կառուցած բոլոր շինութիւնների գլուխ գործոցն է և, որովհետև եօթներորդ դարում խիստ զարգանում է հայ ճարտարապետութիւնը, կթուենք այն բոլոր շինութիւնները, որ կառուցուել են աւելի շուտ և այդ դաշտում։ Դա հայկական ճարտարապետութեան ինքնուրացն արտայայտութեան առաջի ծաղկեալ շրջանն է և արժէ առանձին առնել և քննել։

Այս աշխատանքով պարտական ենք Էջմիածնի միաբան Խաչիկ Վարդապետի Զուարթնոցը բաց անելու համար կատարած պեղումներին, որոնք այնքան մեծ հետաքրքրութիւն շարժեցին իրենց չափազանց մեծ արդիւնքներով։ Նա պեղումները սկսեց 1900 թուի Մայիսի 29-ին,

կանխապէս թոյլտւութիւն ստանալով Կայսերական Հռնագիտական Յանձնաժողովով Յանձնաժողովով կամ շարունակեց մինչև 1904 թ. Օգոստոսի 13-ը¹⁾). Խաչիկ վարդապետը պատրաստում է իւր պեղումների մասին տեղեկութիւններ հրատարակել, բայց որովհետեւ գործի հետաքրքրութիւնը մեծ էր, ուստի իմ Պետերբուրգում գտնուած ժամանակ 1902 թ. ամառը Հետագիտական Յանձնաժողովը ինձ յանձնեց Խաչիկ վարդապետի ուղարկած լուսանկարները և նրա գտած իրերի երկու համառօտ ցուցակի, խնդրելով այդ մասին մի բան գրել։ Աշխատանքի ընթացքում աւելի գրաւուեցի և իմ վերոյգրած ծրագրով շարադրութիւն գրեցի, որ տպագրուեց Ընկերութեան Յայտարարութեան եօթներորդ տետրակում, այս վերնագրով. — *Pаскопки развалинց պէրկու Ս. Григорիլ ճաւազ Թւմіадзина — Եջմիածնի մօսի Ս. Գրիգոր եկեղեցու պեղումները*²⁾.

Նախ քան աշխատութեանը ձեռնարկելը, Պետեր-
բուրգից դիմեցի հայր Խաչիկին և նրան յայտնելով իմ
ստացած յանձնարարութիւնը և դիմաւորութիւնը, խընդ-
րեցի մի շարք հարցերի պատասխան. սակայն նա իմ
նամակը թողեց անպատճախան և յօդուածիս մէջ թե-
րութիւններ մնացին:

Այդ աշխատանքը իրեւ առաջին պրակ (serie) հրատարակում ենք հայերէն լեզուով, ոչ իրեւ թարգմանութիւն, այլ խիստ փոփոխուած, աւելցրած և լրացրած։ Աշխատանքի հայերէն տպագրութիւնը հնարաւոր է շնորհիւ այն բանի, որ Հնագիտական Յանձնաժողովից ձեր ստացայ 30 հատ պատրաստի կիշաներ։ բայց համեմատ

4) Այդ թուին նա. մինչեւ օրս էլ անյայտ մնացած պատճառով, արսորուեց Ռուսաստանի խորթերը. Տեմիկով քաղաքը հինգ տարով, բայց բարերափառաբար մի տարի յետոյ վերադարձաւ եւ կարող է շարունակել իւր թերի զորձը.

2) Извѣстія С. Петерб. Имп. Арх. Комитета. VII Выпукъ,
4⁰, т. 48 въ 20 штабштапахъ үкшарнѣвроп.

գրքի ընդարձակ ծրագրին, նախկինի վրայ աւելացրի նոր նկարներ։ Ճարտարապետ պլ. Թորոս Թորոմանեանը նկարեց բոլոր շինութիւնների ընդհանուր յատակագիծը, ճարտարապետ պլ. Քրիստափոր Ցէր-Սարգսեանը պատրաստեց բուն եկեղեցու մանրազնին յատակագիծը, իսկ տիտելը բառի նկարը պատրաստել է նկարիչ Ա. Դարրիէլեանը։ Հանդամանկները խանդարեցին երկու տարի առաջ պատրաստած գործը լոյս ածելու, որ տպագրում եմ այժմ, այն էլ ամսաթերթի մէջ, մաս մաս կյանողուի արդեօք միւս պրակներն էլ տպագրել թէ ոչ նիւթը պատրաստ է, բայց ձրի կլիշաներ չունենալով, ինչ խօսք տպագրուածիւնը մեծ ծախք կպահանջի։



Ա.

ԶՈՒԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՂՆ ՈՒ ԱՆՈՒՆԸ

Եկեղեցու աւերակները գտնւում են Արարատիան դաստի վրայ, կջմիածնի վանքից դէպի արևելք մօտ չորս վերստ Հռիփիսի վանքից մօտ երեք վերստ հեռու։ Արարատեան դաշտը Բասախ և Սև ջուր գետերի եղերքներում, զլիսաւորապէս այնտեղ՝ ուր ընկած է Վաղարշապատ գիւղը իւր վարելահողերով, ներկայացնում է ընդհանրապէս հարթ տարածութիւն. միայն Հռիփիսիմէի վանքից սկսած դաշտավայրը սկսում է բարձրանալ, կորչում է հարթութիւնը տեղի տալով բարձրավանդակի՝ լայն փոռւած մեծ և փոքր բլուրներով։ Այդ բարձրաւանդակի սահմանները, աւերակ եկեղեցու անմիջական շրջակայքն առած, կազմում են երկու կողմից, այսինքն հարաւա-արեմուտքից կջմիածնի վարելահողերը, հիւսիսից Աթարէկ-եանների կալուածք Ներսէսապատ գիւղը և կջմիածնի Հնձանափոս կոչուած կալուածքը։ Միայն արևելեան կողմից այդ տարածութիւնը գնալով աւելի է բարձրանում դէպի Վաղարշապատի խառնողի այգիները և աւելի հիւսիսում, դէպի Օշականի դռմբը (առապարները)։ Ամբողջ տարածութիւնը որ կարող է ուղիղ գծով հարաւից հիւսիս հաշուած մօտ երեք վերստ երկարութիւն ունենալ, ենթակայ է Բասախ և Հրազդան գետերի ջրերին և կարող է ոռոգուելով՝ առատ բուսականութեան և պտղաբերութեան յարմար մակերնոյթ ծառայել։ Սակայն ջուր չստանալով ներկայ վիճակում անապատի կերպարանք ունի, արևակէզ մակերնոյթով, զուրկ բնութիւնը կենդանացնող բուսականութիւնից։ Միայն կանուխ դարձանը, կարճ ժամանակով, հողը ծածկում է ցանցառ բոյսերով, գոյնզգոյն և խիստ հոտաւէտ ծաղիկներով. կարճ ժամանակեայ սընունդ մատակարարելով վանքի և գիւղի անասուններին, զլիսաւորապէս ոչխարներին։

Ամառն այստեղ ամեն ինչ չորանում է և հողը կատարեալ անապատի տխուր և վհատեցուցիչ կերպարանք է ընդունում։ Բայց բաւական է աչքեր բարձրացնել այդ աննշան տարա-

ծութիւնից, ձեր առաջ պատկերանում է Արարատեան դաշտի պեանչելի տեսարանը. հեռու հորիզոնի վրայ, հիւսիս-արևելեան կողմում, բարձրանում է յաւիտենական ձիւնով ծածկուած Մեծ Արարատը. որը աչքի տեսողութեան համար, արևմտեան-հարաւային կողմից Հայկական-Պար լեռնաշղթայսվ կարծես թէ սերտ միանում է Արագածի ցից ցից գագաթների հնտ. իսկ սա իւր կողմից հարաւ-արևելքից թեները տարածում է դէպի Արայի լեռար, որ պէս զի արևելա-հիւսիսային կողմով Գեղարքունեաց լեռնաշղթայի հետ կցորդուելով, նորից դայ միանայ Փոքր և Մեծ Արարատների գագաթներին Այսպիսով կազմում է բարձրաբնակ գագաթների — որ միայն ամառուայ տաք ամիսներում են ձիւնից ազատուում — սեպացած ժայռերի մի վիթխարի շղթայ, որ շրջափակում է Արարատի ընդարձակ դաշտավայրը. Այդ դաշտի միջով օճապտույտ դարսուներով, ամբողջ ուղղութեամբ կտրում անցնում է Երասմը իւր վտակներով՝ Հրազդան, Քասախ և Սև ջուր գնտերով՝ Դոցա հովիտների մշակած դաշտերը բազմաթիւ կաղամախի, ծիրանի և այլ ծառատունեներով և խաղողի այգիներով, կարծես կանաչ ժապավեններով և կեղերում և գեղեցկացնում են ընդարձակ դաշտի միատեսակութիւնը. Գեղեցկութեամբ և աննման վեհութեամբ հազուազիւ և միակ է այդ ամբողջ տեսարանը, որի կենդրունում ընկած են Հայաստանի մեծագոյն և ամենամուլիրական սրբավայրերը. Ա. Եղմիածին, Հոփիսիմէ, Գայքիանէ, Շողակաթ և Զուարթնոց վանքերը.

Հայաստանի հնագոյն նշանաւոր վանքերը շինուած են ըստ մեծի մասին բարձրավանդակ դիրքերի վրայ, բարձր բլուրների, խոր, սեպացած ձորերի փեշերի և գնեսերի ափերի վրայ և զարմացնում են տեսնողին իրենց բանաստեղծական և ամուր դիրքերով: Հնում այդպիսի ընական ամրութիւններից օգտուելով վանքերը ամրացրել փոքրիկ բերդեր և դղեսկներ են դարձել: Վանքերը միենայն ժամանակ ամրոցներ էին կշմիածինը իւր շրջակայ վանքերով, թէև շինուած էին հարթ տարածութեան վրայ, բացառութիւն չէին կազմում, նոքա ևս ազօթաներ և ամրոցներ էին, իսկ շրջապատի տեսարանների վեհութեամբ աննման և բացարիկ են:

Ս. Էջմիածինը և Գայքիանէն, Հոփիսիմէ և Շողակաթ վանքերը շինուած են մօտ կէս վերստ միմեանցից հեռու, միայն թէ առաջին երկուած աւելի մօտ են միմեանց, աւելի հեռու միւս երկուածից, որոնք նոյնպէս իրար մօտ են: Ամեն մի վանք առանձին վերցրած, սովորական աչքի հայացքով, կարծես թէ գտնուում է Արարատեան դաշտի կենդրունում, հաւասար հեռու Արարատ և Արագած լեռներից: Նմանապէս այդ վանքերի աղեղնաձև գծի վրայ էր կառուցած

Զուարթնոց եկեղեցին, 3—4 վերստ հեռու նոցանից Հինգ եկեղեցիներից երկը՝ էջմիածինը, Գայքանէն և Շողակաթը գտնուում են հարթ հաւասար դաշտի վրայ, իսկ Զուարթնոցն ու Հարփսիմէն շինուած լինելով բարձրավանդակ դիրքերում հեռանկարում միւսների համեմատութեամբ աւելի խոչըր են և լայնանիստ։ Այդ բանին նպաստում էր նաև շինութեան արտաքին ձեզ։ Սոցա պատերը բարձր էին, գմբէթները ցած՝ ամբողջ կորպուսի հետ սեռ միացած։ Խոկական մեծութեամբ վանքերը պէտք է դասաւորել այսպէս։ Էջմիածին, Զուարթնոց, Գայքանէ, Հարփսիմէ և Շողակաթ։

Դոցանից չորսը կանգուն են, դարերը և թշնամու աւերիչ ոյժը թէն անհնատ չեն անցնել նոցա համար, բայց աւերը այնքան մեծ չէ եղել, որ վերանորոգելն ու կարկատելը մեծ գժուարութիւնների հանդիպէր։ Նոյն վիճակը չի ունեցել Զուարթնոցը։ Նա ժամանակով ամենից ուշ է շինուել, բացառութեամբ Շողակաթի, որ տասնուեօթներորդ դարու գործ է։ Զուարթնոցի աւերը այնպէս սասատիկ էր, որ նրանման փառահեղ տաճարի հոյակապ զանգուածից մընացել են խզնուել բեկորներ։

Նախ քան պեղման սկսելը, տաճարի տեղը երեսում էին միայն մի քանի ցից ցից որ և է ձեմք գորպի զանգուածներ։ Դոցանից երկուաը գլորուած էին հիւսիս և հարաւային մասերում, որ ինչպէս յատոյ երեաց, գմբէթի մասերն էին, ուրիշ երկուաը տաճարի մէջն էին՝ երկու միջի սիհների բնկորներ։ Սոցա արտաքին կողմի որրատաշ քարերը հանուած էին, պահելով պատի ներսի մանր քարերի և խճի կրաշաղախոր։ Դարերով հաւաքուած և կուտակուած աւազն ու անմաքութիւնները ամբողջովին ծածկել էին շինութեան բոլոր միւս հետքերը կազմելով մի ընդարձակ, զլիսաւորապէս հարաւակց հիւսիս լայն փառուած և բաւական բարձր բլուր Ուստի, եթէ չունենայինք գրական-պատմական տեղեկութիւններ, հազիւ թէ կարողանայինք առանց պեղումների ենթադրել, որ այդ տձե բնկորները եկեղեցու շինութեան մնացորդներ են։

Երջակայ հայ բնակիչները այդ աւերակներին Զուարթնոց, Առապարի կամ Կուերի խանգարած կամ հանգած եկեղեցի էին կոչում մ Սակայն ժողովրդի գործածած անունը և այն, որ այդ աւերակները եկեղեցին, հաղիւ թէ հիմնուած լինին։ Էին աւանդութիւններ, հազիւ թէ կարողանայինք առանց պեղումների ենթադրել, որ այդ

Առ հասարակ Հայաստանում եթէ որ և է տեղի կամ աւերակի մասին ժողովրդի մէջ պահուած են հին աւանդութիւններ, այն ժամանակ այդպիսի տեղերը հանդիսանուած են մի տեսակ պաշտաման առարկայ ժողովրդի համար։ Հայեր, մահմետականներ, նոյն իսկ քիւրդեր մեծ երկիւզածութեամբ են վերաբերուում դէպի

այդպիսի տեղերը և աւերակները։ Օրինակի համար մեծ յանցանք և մեղք է համարւում ձեռք տալ այդ աւերակների բնկորներին, քանդել կամ քարեր տանել նոր շինութեան համար գործածելու¹⁾։ Մինչև անդամ այդպիսի տեղերում բուռնող ծառերն էլ են պրութիւն համարւում և ոչ ոք չի համարձակուիլ նրանց չորացած, զետին թափուած ճիւղերը հաւաքել իւր տունը տանել Մարսամբ այդ հաւատի չնորհիւն է, որ սուրբ համարւած տեղերում կարելի է նկատել հնագարեան ծառերի խմբեր, կամ հատ հատվիթսարի ծառ, մասամբ չորացած կամ ընկած ճիւղերով, մանաւանդ բլուրների, առանձնացած ազբիւրների վրայ, մինչդեռ շուրջ բոլոր կտրատել, անհետ կորցրել են հին անտառների վերջի հնտքերը։ Նոյն հաւատի չնորհիւն է, որ կանգուն պահպանուած են շատ աւերակ եկեղեցիներ մինչև անդամ մահմեդականների բնակած գիւղերում։

Այդպիսի լաւ վերաբերմունք ժողովրդի կողմից դէպի Զուարթնոց եկեղեցին չենք նկատում, նա ոչ միայն անտարբեր է գանուել դէպի այդ շինութիւնները, նոցա մասին ոչ մի աւանդութիւն չըպահպանելով, այլ մինչև անդամ մաքուր սրբել տարել է հոգի և աւազի քջակոյտի տակից դուրս մնացած բոլոր քարերը²⁾։ Գուցէ ժողովուրդը չի էլ խմացել, որ եղած բնկորները եկեղեցու աւերակներ էին, որովհետեւ նոքա միանալով կաթուցիկոսարանի ընդար-

1) Dubois de Montréal, Voyage auteur du Caucase, III էջ 588. նկարագրելով երեւանի գաւառում գտնւած Գառնի ծին քաղաքի Տրդատ Թագաւորի պալատի աւերակները, շեշտաւմ է տեղական ժողովրդի այդ յատկութիւնը, նրա ասելով «Տեղական հայերի յարգանքը դէպի այդ քեկորները այնպէս մեծ է, որ նոցանից ոչ որ չի ցանկանալ այնտեղից իւր գործածութեան համար վերցնել մի քար կամ կարնիզի մի կտոր եւ ոչ էլ թոյլ կտոր այդ ուրիշին անելու»։

2) Այս միտքը, անկախ մեզնից, յայտնել է Յուսիկ եպիսկոպոսը՝ «Բուն ժողովուրդը որ ընդհանրապէս յարգում է եկեղեցիների աւերակները որպէս նախնական սրբավայրեր եւ ուխտատեղիք, հակառակ այդ ընդհանրացած սովորութեան անտարբեր է եղել միշտ դէպի Խանկարած եկեղեցին եւ ոչ մի բարեպաշտական ճգուտմն չէ տածել դէպի այն Այնտեղ չէ վառւում մոմ ու նրափ չէր ծխւում խունի ու կնդրուկ, ոչ էլ թունում են քարերի ծերպերում կամ մացաւների վերայ ճանդերծից ծուեններ, որոնցով ընդհանրապէս զարդարուած են լինում խաչքարերն ու աւերակ եկեղեցիների մօտ եղած մատուռները» (Վաղարշապատի Առապարի կամ Զուարթնոց եկեղեցին. Արարատ, 4903. 874)։

ձակ շինութիւններին, կազմել էին աւերակների ընդարձակ կոյս, որից ժողովուրդը առանց երկեւդ կրելու՝ թէ եկեղեցու քարեր են, օգտառել է հանգիստ խղճով: Յամենայն դէպս վճռապէս կարելի է պնդել, որ այժմ գործածական դարձած օջուարթնոց եկեղեցին, կամ «Հանդած ու Խանդարած եկեղեցին դարձուածները ամենաւշերջի ժամանակներում են մուտք գործել ժողովրդի մէջ զրականութիւնից վերցրած տեղեկութիւնների ազդեցաւթեամբ»:

Աւերակների քարերի գործածութեան համար կայ մի ենթադրութիւն ևս որ պակաս հաւանական չէ. այդ այն է, որ նրա քարերը բներել են և գործ են դրել էջմիածնի շրջապարիսպը շինելիստինչպէս յետոյ կտեսնենք, սիւների չորս խոյակները անյայտ ժամանակներից բերուած պահուամ էին Գէորգեան ճեմարանի բակում. յետոյ այդ խոյակների մի ուրիշ բնեկորը գտնելի է էջմիածնի հիւսիսային պարասպի այն մասում, որ քամնդել են Նրեմիա եպիսկոպոսի օրով (1893 թուին), միարանական նոր բնակարանը կառուցանելիս Քարերի բնեկորներից կան նաև Վաղարշապատի գերեզմանատանը: Այդ բանի վրայ իմ ուշադրութիւնը դարձրեց Յուսիկ եպիսկոպոսը: Անձամբ զնացի էջմիածնի վանքի Ղոփ այգու մօտ եղած զիւղական գերեզմանատունը և այնտեղ զայ Զուարթնոցի մի խոյակ, ուղիղ միջից կտրուած և իբրև գերեզմանաքար յարմարեցրած: Պահուած է խոյակի այն մասը, որ ունի յունարէն «ռաթօլիքոս» մակագրութիւնը:

1) Սիւների մի քանիսի խոյակների վրայ կան յունարէն դրերով «Ներսէս» եւ «Կաթուղիկոս» մակագրութիւնները. այդ մասին տես Ժ. Գլուխով:

Բ.

ԱՐԴԵՕՔ ԿԱՅԻՆ ԶՈՒԱՐԹՆՈՑԻ ՏԵՂՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ
ԱԼԵՐԱԿՆԵՐ

Այս հարցը օտարոտի չպիտի երեայ, եթէ մտարերելու լինենք թէ ինչպիսի առասպեկներ հիւսւեցին այդ ևկեղեցու շուրջը, թէ ինչ պիճարամութիւններ տեղի ունեցան իշմիածնի միաբանութեան մէջ, որ նիւթ ծառայեց հայ, նոյն իսկ ոռու թերթերին: Մասամբ այդ պատճառով մենք անշահ չենք համարում այդ առթիւ մի քանի խօսք ասել: Հայր Խաչիկը առանց հասդէտ և պատմադէտ լինելու՝ նախ հողակոյտի տակից հրապարակ հանեց Զուարթնոց գեղեցկացին և ազա մատնանիշ արաւ մի քաղաքի աւերակների վրայ, որ ընկած էր ամենքիս առաջ, որի տարածութիւնը տասնեակ անգամներ մեզից շաս շատերը ոտով, ձիով, կառքով շրջել և անտարբեր մօսումն անցել են Բայց ինչից ծագեց նրա գիւտի առթիւ եղած աղմուկն ու յուղմունքը, նրա համար, որ նա կարծեն խառնում էր երկու միմնանց հետ կապ չունեցող աւերակները: Այդ գնու հերլիք չէ, նա լաւ չասկանալով իւր գիւտի կարնորութիւնը, սիսալ մեկնութիւնների մէջ ընկաւ և ֆանատիկոսի յամառութեամբ աւելի և աւելի խրուելով իւր սիսալի մէջ, սկսեց յեղաշրջել ակնյայտնի պատմական փաստերը և պնդել անհեթեթ քանիր, նա կարծես ուղում էր ոչ պատմութիւն ճանաչել, ոչ առողջ դատողութիւն լսել: Ի լրումն այդ ամենի, նա փոխանակ հրապարակ գալու և կարող անձանց դատաստանին տալու իւր ենթադրութիւնները, այդ ամենը յայտնում էր իւր այցելուններին իբրև ճշմարտութիւն: Նա ամենավիրջին գիւղացուց սկսած ամեն մի այցելուի անխտիր պատմում էր, որ ինքը գտել է Հին-Վաղարշապատը, Հին-իշմիածինը, Լուսաւորչի մասունքները և մի շարք պատմութիւններ, որ ցանկալի է մոռացութեան տալ:

Առաջիկայ ուստմասախրութիւնից կերեայ, որ Զուարթնոցը և կամիածինը տարբեր բաներ են, որ հրապարակ եկած աւերակների հաստահեղիւս սիւների տակ մասունքներ չեն թաղուած եղել և որ Խաչիկ վարդապետը այնտեղ մասունքներ

գտնել չէր կարող: Դրա փոխարէն կարծես հաստատւում է նրա այն ենթադրութիւնը, որ Զուարթնոցի շուրջն են գտնւում Հին-Վա-ղարշապատ կամ մի ուրիշ քաղաքի աւերակները:

Նա շատ անդամ էր ինձ հետ խօսելիս պնդում, որ Հոփիսիմէի վանքից մինչև Սթաբէկեանի կալուածքի սահմանները հա-րաւ-արենելք-հիւսիս ընկնող կիսաբողոքակ բլուրների շարքը հին քաղաքի պարսպարլուրներն են կազմում, որոնք Հնձանափոսով գալիս արենմուտքից շրջափակում են բլուրների ամբողջ տարա-ծութիւնը, մօտաւորապէս 10 վերստ շրջագծով: Բայց ես նրա ա-սածներին հաւատ չէի ընծայում: մի անդամ նա քայլելով ինձ հետ զէպի հիւսիս՝ Ներսէսապատ, ինձ ցոյց էր տալիս պատերի հետ-քեր, ևս շարունակելով կատկածել, պնդում էի, նախ, թէ ինչպէս կարող է առանց մօտակայ գետի, այն էլ հին դարերում, գոյու-թիւն ունենալ այդպիսի վիթխարի քաղաք, և երկրորդ, նախ քան դրականապէս համոզուելու և այդ բլուրներն աշտարակներ և պա-րիսպներ հրատարակելը՝ անհրաժեշտ է գոնէ մի քանի տեղ փորձ-նական պեղումներ կատարել: Բայց իմ վկրջի խնդիրը չէր կա-տարում, ձգձգում էր:

Անցաւ ժամանակի 1904 թուի նոյեմբեր ամսի սկզբին ինձ մօտ եկաւ Մուրագեան Եղիշէ վարդապետը և յայտնեց, որ Զուարթ-նոցի շուրջը, նրա արենելահարաւային կողմերում նկատել է մի շարք աշտարակների հետքեր: Միւս օրը ձի նստած զնացինք քըն-նեցինք այդ բլուրները¹⁾ և հինգի վրայ նկատեցինք ակնյայտնի շրջանաձև պատերի հետքեր: Քննութիւնը շարունակելով երկրորդ և երրորդ անգամ, մեր վերե նկարագրած ընդարձակ բլուրների շարքերում գտանք ամենազանազան կէտերում խիստ հաստ պա-տերի հետքեր, երբեմն մինչև երկու ու կէս արշին հաստութեամբ: Այլ ևս կասկած լինել չէր կարող, որ մեր առաջ ընկած են մի մեծ հին քաղաքի ընդարձակ աւերակներ, և որ Խաչիկ վարդապետը արդար է եղել, յայտնելով, որ այդտեղ աւերակ քաղաք է գտնել: Փորձնական պեղման չձեռնարկեցինք, սպասում էինք թոյլառու-թեան, մինչև այդ անշահ չենք համարում յայտնել այն, ինչ որ գիտենք²⁾:

1) Ինչպէս նկատեցինք հ. Խաչիկը ինձ ցոյց էր տուել բլուրների հիւ-սրսային շարքը: Խսկ այնտեղ աւերակների հետքերը բացորոշ չեն:

2) Պեղման թոյլառութիւն Կայսերական Հնագիտական Յանձնաժո-ղովից ստացանք: Բայց ձմեռը վրայ հասաւ: Արարատան դաշտը ծած-կուեց միւնով եւ հարկաւոր էր սպասել զարնանը: Սակայն 1905 եւ 1906

ա. Պ. ճարտարապետ թորումաննեանը ինձ իմացրեց, որ 1903 աշնանը, երբ Վաղարշապատում կենդանիների մէջ ժանդախտ կար և նոցա լիշերը թաղելու համար փորեցին Հոփիսիմէլից դէպի հարաւ մօտ հարիւր սաժէն հեռու ընկած բլուրը, երեան եկաւ շըրջանակածե ողարսպի հետք, մօտ երկը արշին հաստութեամբ սրբատաշ քարերով շարուած։ Դժբախտաբար հանուած քարերը տարել էին և պատի հիմքը նորից հովի տակ լեւէրի հնատ ծածկիլ։ Բայց 1904 թ. ևա, երբ խոլերայ երեաց, նորա առաջի մի քանի զոհերին դարձեալ նոյն բլրի մէջ թաղեցին և նորից հանուեցին մոյզ կարմիր մաքուր տաշած քարեր։

բ. Ես մտարերեցի, որ 1898 թուին, երբ հանգուցեալ երեմիա արքեպիսկոպոսը մաքրում էր Հոփիսիմէլի մօտ իւր շինած տան բակի բլրանման հողակոյտը, երեան եկան մի շարք թոնիրներ, որոնք անկասկած աւելի հին էին քան Հոփիսիմէլի վանքի շինութիւնը, որովնեան գտնուում էին այն բլրի խորքում, որի վրայ շինուած է վանքը, միայն թէ վանքից քիչ հեռու։

գ. Հին շինութեան հետքեր են երեացել նաև դաշտի մէջ, մօտ $1\frac{1}{2}$ - 2 վերատ վանքի ազարակից հեռու։

Ի միջի այլոց 1898 թ. նոյն դաշտի մէջ մենք սկսել էինք փորել մի կուրգան, բայց անփորձ լինելով անյաջող տարանք, պեղուումը մենք սկսեցինք ուղղակի կուրգանի գագաթից։ Երեսի հողի շերտից յետոյ երեան եկաւ մի մեծ շերտ գետի խոշոր քարերի կոյտ, նորա տակը մոխրի լիցք և ապա համեսելով մայր հողին և ոչինչ չգտնելով ձգեցինք աշխատանքը։ Այդ կուրգանը այդպէս էլ մինչև օրս մնում է չհետախուզուած։

Կուրգանների թիւը շատ է։ Նորերս կրկին անդամ անցնելով մեր նախկին պեղման տեղը համարեցինք չորս զոյտ կուրգաններ, որովնեան մեր տեսածները իրար մօտ երկերկու են ընկած՝ տաս տասնուհինգ սաժէն տարածութեամբ։ Այս կուրգանները կարող են որ և է կապ չունենալ մեր յիշած աւերակների հետ, միայն գըտնելով նրա անմիջական մերձաւորութեան վրայ, անշուշտ արժանի են ուշադրութեան։

դ. Ի վերջոյ հարկ եմ համարում յիշել, որ կրկին և կրկին կատարած հետախուզութիւնները աւերակների նոր ընդարձակ հետքեր երեան հանեցին։ Նամանաւանդ մի երկար պատ, կէս վերստից աւելի ձգուած, $2\frac{1}{2}$ արշին հաստութեամբ, որ թէն եր-

թ. աղէտները մինչեւ օրս էլ անիրազործելի թողեցին մեր եւ աքսորից վերադարձած Խաչի վարդապետի դիտաւորութիւնը.

բենին անհետանում է, բայց շարունակութիւնը ոչ մի կասկածի տեղիք չի տալիս:

Բացի վերոյիշեալ ննթադրութիւններից Բարդուղիմէոս եպիսկոպոսը և Խաչիկ վարդապետը փորձեցին ցոյց տալ, որ Զուարթնոց եկեղեցու տեղը առաջ չինուած էր Ապողոնի տաճարը¹⁾: Առաջինի պատճառաբարանութիւնն այս է. Լուսաւորիչը Խոր-Վիրապից Վաղարշապատ է եկել Արտաշատի պողոտայով, որը գտնուում էր քաղաքի արևելահասխային կողմում, Հոփիսիմէի նահատակութեան տեղին մօտ (Ազաթ. 118): Նախարարները արտաքոյ քաղաքին սպասում էին նրա (Ագ. 131) «և ուր այն օրը» շարունակում է Բարդուղիմէոս եպիսկոպոսը, գիշերեցին՝ ըստ Սերէոսի²⁾, անշուշտ իրքե մի նշանաւոր մեծ հաստատութեան մէջ, և ուր տեղի ունեցաւ ո. Լուսաւորչի «Զուարթնոց երկնից տեսիլը»³⁾:

Սերէոսը չի ասել թէ Վաղարշապատից Լուսաւորչին ընդառաջող նախարարները հանդիպման տեղում գիշերեցին: Դրա փոխարէն Ազաթանգեղոսը շատ որոշ կերպով պատմում է, թէ մոլեգնեալ Տրդատն ու հայոց նախարարները քաղաքից դուրս հանդիպեցին ս. Գրիգորին. առ աղօթեց նոցա համար, հանդարտացրեց թագաւորին և ապա հարցրեց թէ ուր են նահատակուած կոյսերի մարմինները: Նոցա ցուցմանը անմիջապէս գնաց հաւաքեց անթաղ մեացած մարմինները, ժամանակաւորապէս ամփոփեց նոցա և այն հնձանում, ուր կոյսերն էին ապրել, ինքն օթեաննեց. «ուր վանքն իսկ լեալ էին նոցա և իւր իսկ վանա արդէն կալեալ օթեգանս առնէր» (Ագ. 133): Եւ որքան ընական յանուն Գրիստոնի նահատակուած մի սրբի համար, քան եթէ նա իւր չարչարանքի տեղից յաղթանակով դուրս գալով իջևաններ հեթանոսական թէկուզ ւանշուշտ մի մեծ հաստատութեան մէջ:

Դարձեալ պատմական չէ Բարդուղիմէոս եպիսկոպոսի ննթադրութիւնը, թէ այդ մեծ հաստատութեան մէջ տեղի ունեցաւ Լուսաւորչի «Զուարթնոց երկնից տեսիլը»: Թէ տեսիլը պատմական իրողութիւն ընդունենք, այն ժամանակ տեղի վերաբերմամբ պար-

1) Խաչիկ վարդապետը դարձեալ ոյինչ չէ գրել. այլ բերանացի խօսում էր շատերի հետ եւ նրա խօսքերի հիման վրայ ուրիշները գրեցին.

2) Սերէոսի խօսքերն են «ի վերայ մանապարհին՝ յորում ասեն ընդ առաջ եղեւ թագաւորն Տրդատ. սրբոյն Գրիգորի». գիշերելու մասին ոչ մի խօսք.

3) Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ. Թիֆլիզ. 1902 էջ 130. 134. Տես Ազաթ. Թիֆլիզ. 1882.

տաւորական նշանակութիւն ունի ամենից առաջ տեսիլը պատմող Ազաթանգեղոսի վկայութիւնը իսկ նա, ինչպէս տեսանք, առևլ է, որ կուսաւորչի օթեանը հնձանն էր, ուրեմն տեսին էլ այնտեղ է երեացել Ուրիշ վկայութիւն տեսլի մասին չունենք: Ինչ վերաբերում է Սերէոսին, նա չի ասել թէ Ներաէսը եկեղեցին շինեց երկնից Զուարթնոցի և բնաման տեղում, այլ յանուն, այսինքն ի յիշատակ և երկնաւոր զուարթնոցն որոց երեւալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի:

Դարձեալ Ազաթանգեղոսը պատմում է, թէ Տրդատը զօրքի զլուխն անցած Վաղարշապատից գնաց Արտաշատ անահտական կուռքերի բագինները կործանելու. բայց ժաման դիմեալ ի ճանապարհի երազացոյց երազնդհան պաշտաման Տիր դից . . . քակեալ . . . աւերեալ քանդեցին» (452): Բարդուղիմէոս եպիսկոպոսը, ոչ թէ ենթադրաբար, այլ համոզմամբ հաստատում է, ուշատագնաց ամբոխը և խուժանը մայրաբաղաքը չհանդիպեցնելու համար՝ արտաքոյ քաղաքին են կանգնեցրել Ապողոնի (կամ Տիր դից) դիք և մննեանք: Ճիշտ այն տեղում ուր այժմ և Առապարի ո. Գրիգորի եկեղեցու աւերաբկն է: Եւ մի համոզմունք, հիմնուած այն բանի վրայ, որ Տրդատը Արտաշատ գնալիս ճանապարհին կործանել է Տիր դից բագինը. իսկ դրա հակառակ ժամանակակից Սերէոս պատմագիրը բացորոշ գրում է, որ առապար և անապատ էր վայրը՝ Ներսէս կաթուղիկոսի եկեղեցու համար ընտրած տեղը, որը նա շենացրեց իւր շինութիւններով և անկած այգիններով: Քանի որ պատմական ուրիշ ոչ մի տեղեկութիւն չունենք, կարծում ենք հիմք չկայ Սերէոսի ասածներից շեղուելու: Պեղումներ կատարում են պատմութեան մուլթ կնճիռներ պարզելու և ոչ թէ անկասկածելի փաստերն էլ կասկածելի դարձնելու և այլիկ վարդապետը ինչ որ հին եկեղեցի, ին իշմիածին էր ուզում գտնել Զուարթնոցի կողքին, Բարդուղիմէոս եպիսկոպոսը նոյն տեղում ավիշծ կոստոնն, Ապողոնի տաճար է որոնում: Պատմութիւնը այդպիսի բան չդիտէ. պեղումներն էլ միմիայն պատմութեան տեղեկութիւնները հաստատեցին:

Զուարթնոց եկեղեցին իւր անմիջական շրջակայքում գըտնուած աւերաբկներից անկախ շինութիւն է. նա նոցա հետ կապ չունի:

Գ.

ԵԿԵՂԵՑԻՆ ՇԻՆԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ.

Զուարթնոց եկեղեցու շինութեան համար ունինք գրական հարուստ ազրիւրներ։ Դոքա մեծ և բացառիկ արժէք ունին՝ որովհետեւ կամ ժամանակակից են, կամ նրանց վրայ հիմուստ։

Առաջին տեղը պիտի տալ Սեբէոսի պատմաբեանը, որովհետեւ պատմազրողը Շինող կաթուղիկոսի անմիջական ժամանակակիցն էր։ Համարեա թէ կարելի է դորան համահաւասար համարել մի ուրիշ պատմազրի, Մովսէս Կաղականդացու, Ներսէսի կրտսեր ժամանակակիցի հազորդածը։

Այսուհետեւ եկեղեցին յիշատակում են Թովմա Արծրունին, Յովհաննես կարուղիկոսը, Ստեփաննոս Ասողիկը, Սամուել Աթեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդան Բարձրաքերդցին եւ Կիրակոս Գանձակեցին, որոնք ապրել են իննից մինչև տասներեքերրորդ դարը։ Սոցանից վերջինները թէն չեն տեսել եկեղեցին, բայց զըրել են այն ժամանակները, երբ եկեղեցու մասին եղած աւանդութիւնները դեռ թարմ էին։

Բոլոր պատմազիրները միաբերան եկեղեցու շինութիւնը վերաբրում են Ներսէս Երրորդ Տայեցի կարուղիկոսին, որին միայն Թովմա Արծրունին ակնյայտնի անճշտութեամբ անւանում է Ներսէս Երկրորդ¹⁾։ Նորա կեանքի և գործունէութեան մասին ամենամանրամասն տեղեկութիւնը կարդում ենք Սեբէոս պատմազրի մօտ, որ աւելորդ չեմ համարում բառացի առաջ բերել։

«Արդ՝ ասացից փոքր մի ի շատէ վասն Հայոց կաթուղիկոսին Ներսիսին Զի էր նա բնակութեամբ ի Տայոց՝ ի գեղջէն որում իշ-

1) Ընդունուած ժամանակագրութեամբ Ներսէս Առաջին Մեծը կաթուղիկոս էր 562—575 թ.։ Ներսէս Երկրորդ Աշտարակեցին 348|9 556|7 եւ Տայեցին 642—661։ Այս Թուականների համար տես Եր. Ter-Minassianz, Die armenische Kirche. 1904 էջ 17, 42 և 1, եւ էջ 62.

խանն կոչեն, Եւ սնեալ ի մանկութենն յաշխարհին Յունաց Եւ ուսեալ զլեզուս Եւ զդպրուքին Հոռոմին և շրջեալ ընդ աշխարհս զօրու կարգօք զինուորութեան, և հաստատեալ զմիս իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի և ի վերայ տումարին Լևոնի:

Եւ ոչ ումեք ի վեր հանէք զխորհուրդն ամբարշտութեան մինչ եհաս յեպիսկոպոսութիւն աշխարհին և անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան, Եւ էք այր առափինի վարուք, պահօք և աղօթիւք, բայց ի օրտի իւրում ծածկեալ ունէք զթոյնս դասնութեան և խորհէք հաւանեցուցանել զհայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն ոչ համարձակէք, Մինչեւ եկն արքայ Կոստանդին¹⁾ և նստաւ ի տան կաթուղիկոսին և քարոզեցաւ յեկեղեցւոցն սրբոյն Գրիգորի ժողովն Քաղկեդոնի յաւուր կիւրակէի: Եւ մատեաւ պատարագ Հոռոմերէն ի Հոռոմ երիցուէ և հազորդեցաւ Քաղաւորն և կաթուղիկոսն և ամեն եպիսկոպոսունքն, որ կամաւ և որ ակամայց²⁾:

Մեծ եղաւ ժողովրդի բարկութիւնն ու զրգումունքը, ուստի շիրքն զնաց արքայ Կոստանդին ի Դիւնայ՝ զնաց և կաթուղիկոսն ընդ նմաւ Եւ երթեալ դադարեաց ի Տայս և այլ ոչ դարձաւ ի տեղի իւր, զի իշխան Ռշտունեաց և այլ իշխանքն որ ընդ նմա, անհնարին ցամամար զնացեալ էին ի վերայ նորաւ³⁾:

Այդ ամփոփի պատմուածքի մէջ նկարագրւած է Շինող կաթուղիկոսի անձնաւորութիւնը, մի մարդու, որ հիմնովին անցել էր Բիւզանդական զպրոցը, քաջ սովորել էք յունաց լեզուն և դըպրութիւնը, կեանքի մեծ մասը նուիրել էք ժամանակուայ արկածաւլց զինուորական ծառայութեանը և, թողնելով աշխարհի կենցաղը, վերընտրել էր կրօնաւորի սկեմը: Կեանքի մէջ ունեցած փորձառութիւնը, առաքինի վարքը և դէպի պահնեցողութիւնն ու աղօթքը ունեցած սէրը նապաստեցին նրան նոր ասպարիզում առաջ զնալ և նաստաւ եպիսկոպոսութեան և յետոյ նաև կաթուղիկոսութեան աստիճանի Եկեղեցական վարչութեան մէջ այլքան բարձրանալով հենց սկզբից իրան արժանի ցոյց տուեց այն յոյսերին, որ տածում էին դէպի նա նրան ընտրուները չնորիւ նրա կրթութեան և փորձառութեան⁴⁾:

1) Սա Կոստանդին Երկրորդի որդի Կոստանդինոս կամ Կոնստանսն էք որ Թագաւորեց 644—668 թ..

2) Սեբէկոսի եպիսկոպոսի, պատմութիւն ի Էնրակն, Կ. Պոլիս. 1854 էջ 220—224.

3) Սեբէկոս էջ 274:

4) Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանը այսպէս է Նրան բնորո-

Դեռ նրա նախորդի օրով արաբները յարձակում գործելով Հայաստանի վրայ, աւերել էին շատ քաղաքներ, կործանել շատ ամրութիւններ և եկեղեցիներ, գերի տարել մինչև 35000 բնակիչ, սարսափ տարածելով ամեն կողմէ Այնուհետեւ սովորական դարձաւ արաբական արշաւանքները և հայ ժողովուրդը մեծամեծ նեղութիւնների մէջ ընկաւ Ներսէս կաթողիկոսը սփոփում, միսիթարում էր կենդանի մնացածներին, ազատում գերի ընկածներին, թաղել տալիս մեռելներին, նորոգում կործանւած վանքերն ու եկեղեցիները Նրա ազդեցութիւնը գնալով աճում էր թէ հայ ժողովրդի աշխատմ, թէ յունաց կայսրների և մինչև անդամ արաբների առաջ Վարազտիրոց ասպետը կիւրազապատ է կարգւում նորա միջնորդութեամբ։ Նոյնպէս Թէոդորոս Ռշտունին և Գրիգոր Մամիկոնեանը Հայաստանի կառավարութիւնը ձեռք են բերում Ներսէսի աշակցութեամբ։

Բայց մի հանգամանք մեծապէս ձգեց նրա վարկը և մինչև անդամ ժողովրդի նախկին սէրը փոխուեց ատելութեան Յայտնի է, որ հայերը հրաժարելով ընդունելու Քաղկեդոնի ժողովի որոշումները, հեռացան յունական եկեղեցուց և շատ յաճախ վէճի մէջ էին ընկենում այդ եկեղեցու հետ։ Յոյների գործ դրած ջանքերը՝ վերահաստատել նախկին բարեկամական յարաբերութիւնները, ապարդիւն և անհետնեանք էին մնում։ Այդպիսի փորձ տեղի ունեցաւ նաև Ներսէս կաթողիկոսի օրով, որը, արդեօք իւր բիւղանդական կրթութեան և բիւղանդական համակրութեան չնորհիւ, թէ ուրիշ պատճառներից դրդուած, իւր նախորդներից աւելի զիջող գտնուեց և ակնյայտնի կերպով միացաւ յունաց եկեղեցուն։ Այդ այսպէս կատարուեց։

Հայաստանի վրայ իշխող և արաբների դէմ գործող յունաց զօրքի բանակը Դիմին քաղաքումն էր, որ հինգերորդ դարում դարձել էր Հայոց կաթողիկոսների աթոռանիստը, որովհետեւ Վաղար-

շում, «Քաջարական երիւղալի հանգամանքների միջոցին, երբ այլ եւս բռնութիւններ գործադրել էր կարելի, այդպիսի մի մարդ ներկայանում է Բիւղանդունի քաղաքականութեան ամենալստանելի նեցուկը, Ներսէսն նոյն տեսակի մարգիւնցից էր, որոնք իւրեանց իղձերին հասնելու համար տասնեակ տարիներով վարժուում են ժամանակակից ամբոխը խաբելու համար, նորա պահանջների եւ զգացմունքի կատարելատիպը ներկայանալ արտաքին բոլոր նշաններով։ մի կարծիք, որի հետ համաժայնուել չենք կարող, Տես նրա Հայաստ եկեղ. պատկերայարգութիւնը։ Ս. Պետերբուրգ. 1904. էջ 178. 179.

շապատից այստեղ էր փոխադրուել նաև Հայաստանի մարմաւոր իշխանութեան կենդրոնը: Յունաց զօրքի հրամանատարները եկեղեցիների միութեան հարց յարուցին: Կայսրը նոցա զրգմամբ հայերին թուղթ ուղարկեց միութեան համար: Դվինում ներսէս կաթողիկոսի նախագահութեամբ ժողով գումարուեց, որի մէջ որոշ շեցին կայսեր մերժողական պատասխան զրել: Եթէ մինչև անգամ ներսէսը, համեմատ Սերէսոսի վկայութեան, սրտով համակարծիք էր կայսեր առաջարկութեանը.—Ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթոյնս դասնութեանն:—այդ ժողովում ծածկեց իւր դիտաւորութիւնը, որովհետեւ իրեն ժողովի նախագահ, ակնյայտնի կերպով համոզուեց, որ ազգային եկեղեցու հնաւանդ կարգերի և դաւանութեան կողմանակիցների կուսակցութիւնը շատ զօրեղ է և չի թոյլ տալ որեէ փոփոխութիւն: Կաթողիկոսը ստիպուած էր սպասելու աւելի յարմար առիթի:

Ինձ թւում է, որ կաթողիկոսի մտադրութիւնը Վաղարշապատի երեք փառանեղ կանգուն եկեղեցիների կողքին շինել մի չորրորդը ապացոյց է, որ ճշմարիտ է Սերէսոսի հաղորդամբը, թէ ներսէսը իւր սրտի խորքից բղխած համոզմամբ էր ցանկանում եկեղեցիների միութիւնը: Իւր գաղտնի դիտաւորութիւնը զլուկ բերել Դվինում նրան անհնար էր թւում, որովհետեւ ինչպէս փորձով տեսաւ, շատ զօրեղ էին ազգային եկեղեցու սկզբունքները անադարտ պահպանութեան կողմանակիցները, որոնց գլխին կանգնած էր երկրի իշխան թէողորոս Ռշտունին: Կշռեղով այդ հանգամանքը, նա բարւոք համարեց իւր աթուոք փոխադրել հայերի աշքում ամենամեծ սրբավայր ճանաչուած Վաղարշապատը, հեռանալ մարմաւոր իշխողների անմիջական ազգեցութիւնից, փոքր առ փոքր իւր շուրջը ժողովել և ուժեղացնել համակարծիկների մի կուսակցութիւն և հանդէս գալ իւր իսկական դիտաւորութեամբ:

Վաղարշապատ քաղաքը այն ժամանակները նախին փառահեղութիւնից ընկել անհնան զիւլի աստիճանի էր հասել, ենթակայ լինելով թշնամիների անընդհատ յարձակումներին, բայց այդ տեղը դեռ չէր կորցրել իւր նշանակութիւնը շնորհիւ էջմիածնի, կամ աւելի ուղիղ՝ ըստ այն ժամանակուայ անուանակոչութեան և Կաքուղիկեա, Ճոկիփոխն և Գայլանէ վանքերի, որ հիմնովին վերաշինուել կամ վերանորոգուել էին ներսէսի նախորդ կոմիտաս և Եղի կաթուղիկոսների ձեռքով և հաւատացող հայերի համար ամենամեծ ձգողական ոյժն էին: Թէ ինչու ներսէսը այդտեղ վերընտրելով իւր կաթուղիկոսարանը Մայր տաճարի կամ միւս վանքերից մէկն ու մէկի մօտ չհաստատեց, այլ նոր եկեղեցի լինեց, այդ էլ դժուար չէ հասկանալ: Կոմիտասը կառուցել էր Հռիփսիմէի փա-

ուահեղ եկեղեցին, շինել էր կաթուղիկէի կտուրը և նրա գմբէթը, եզրը շինել էր Դայիանէն. Ներսէսը բնչպէս չփորձէր շինարարական դործով գերազանցել իւր անմիջական նախորդներին, մանաւանդ որ դրա հետ կապուած էր իւր հեղինակութեան բարձրացումը յօգուած իւր գաղտնի դիտաւորութիւնների, նա այնքան փառանեղ սկսեց իւր շինուածքը, որ իսկապէս գերազանցեց ոչ միայն իւր բոլոր նախորդներին, այլ նաև իւր յաջորդներին:

Եկեղեցուց առաջ Ներսէսը հիմք ձգեց կաթուղիկոսարանին. Աակայն դեռ չէր գերջացրել իւր շինութիւնները և այսուղ չէր փոխազրուել, երբ Դիմին եկաւ կոստանդին կայսրը և իջնանց կաթուղիկոսարանում: Այդաեղ նա կրկին յարուցեց միութեան խնդիրը և Ներսէսը կայսեր և իւր եպիսկոպոսների հետ ո. Դրիգոր Եկեղեցում յունածէս հաղորդութիւն ընդունեց: Ժողովուրդը յուղունց և քանի որ կայսրը իւր զօրքով քաղաքումն էր չաղմկեց: Սակայն Ներսէսը նախատեսելով դալիք փոթորիկը, տեղեկանալով որ ժողովուրդը չի ներելու նրա հաւատափոխութիւնը, կայսեր քաղաքից հեռանալիս, ինքն էլ նրա հետ դուրս եկաւ գնաց կ. Պուլիս Այնանեղ նրան ընդունեցին պատով, ընծաներ և պարզեներ տուին և վերադարին հայրենիք: Ներսէսը, քանի որ Թէոդորոս Ռշտունին կենդանի էր, չփառահացաւ գնալ Դիմին, այլ մենաց իւր մայրենի Տայք գաւառի ամրութիւններում մինչև Թէոդորոսի մահը: Այդ կամաւոր աքսորը տեսեց վեց տարի, որից յետոյ կրկին վերադաւ, հասաւառուց կաթուղիկոսական գահի վրայ և շտապեց գերջացնել եկեղեցու շինութիւնը:

Ներսէսի կեանքի հետ պատահած ձախորդութիւնների մասին պատմում են նաև Յովհաննէս կաթուղիկոս և Ստեփաննոս Ասողիկ պատմազիրները, սակայն ոչ անկախ Աերէսուից: Մենք մասմար երկար կանգ առանք այդ դէպքերի վրայ, նախ՝ որովհետեւ նրանք որոշ չափով կապ ունեն եկեղեցու շինութեան հետ իրեն դրդիչ առիթներ և երկրորդ, որովհետեւ այդ դէպքերը միջոց են տալիս մօտաւորական ճշութեամբ որոշել շինութեան սկզբնաւորութիւնն ու վախճանը:

Դիմինի ժողովը կայացել է ընդունուած հաշով 645—8 թուականին. կոստանդինը Հայաստան է եկել հ. Ալիշանի հաշուով 651—652 թ. 1), իսկ Ք. Պատկանեանի կարծիքով 648—649 թ., որ աւելի հաւանական է և համապատասխան Սամուէլ Անեցու տուած

թուականին¹⁾: Եկեղեցու շինութիւնը սկսուել է ժողովից, այսինքն 645—8-ից յետոյ և շարունակուել մինչև կայսեր Դիլին դալը: Կայսեր հետ միասին 649թ. հեռացաւ և բացակայեց վեց տարի և ապա վերադառնալով Շաստատեցաւ յաթոռ կաթողիկոսութեան, փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն՝ զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքից²⁾:

Սերէոսը իւր պատմութիւնը հասցնում է մինչև եօթներորդ դարու 60-ական թուականը, թէս նրա պատմութեան թելր ընդհատում է 655 թուականով: Սակայն պատմութեան մէջ ակնարկներ կան այնպիսի դէպքերի մասին, որ անհամեմատ աւելի ուշ, մինչև 60-ական թուականն են տեղի ունեցել: Ներսէոսը մեռել է 661 թուականին: Սերէոսը նրա մահուան մասին ոչինչ չի յիշատակում, բայց ինչպէս վերելի վկայութիւնը ակնյայտնի է կացուցանում, գիտէ որ եկեղեցու շինութիւնը աւարտել է: Հետեապէս մենք կարող ենք ընդունել, որ եկեղեցու շինութիւնը սկսուած է 645-ից յետոյ և ներսէօի հակողութեամբ շարունակուել է մինչև 649 թուականը, որը 655թ. վերադառնալով աւարտել է իւր գործը: Կաթուղիկոսի տարագրութեան տարիներում աշխատանքները գուցէ դանդաղ են առաջ ընթացել, բայց կանգ չեն առել, որովհետեւ Յովհաննէս կաթուղիկոսի վկայութեամբ շինութեան շարունակութիւնը և վերահակողութիւնը յանձնուած էր կաթուղիկոսի սեննեկապան Անաստաս Ակոռնեցուն, որ յաջորդեց ներսէօին³⁾:

Մեր ստացած թուականը մօտաւրապէս հաստատում են Սամուէլ Անեցին և Մխիթար Այրիվանեցին, որոնք կոլոր տարեթիւ են տալիս ոչ շատ տարբեր մեր ստացած տարէթուից:

Անեցին գրում է. «ՈՀԴ» (654) Հայրապետն ներսէս շինէ զսուրբ Գրիգոր, զզարմացուցիչն տեսողաց, բայց յառաջ շինէ ըզ-վկայարան ս. Սարգսի ի Դիլին և զոր ի վերայ վիրապին սրբոյն

1) Նեւոնդ պատմազիր ոռւսերէն հրատ. Ք. Պատկանեանի, Ս. Պետերբուրդ. 1862 էջ 152 եւ այդտեղից առաջ 4. Եղեանի հրատ. էջ 177 (Ս. Պետերբ. 1887):

2) Սերէոս 1. 2. 255.

3) «Զկնի ապա Մեծին ներսէսի յաջորդէ զաթոռ հայրապետութեան Անաստաս ի գեղջէն Ակոռնայ. որ ի Մասեաց ոտն. Սա սեննեկապան լեալ Մեծին ներսէսի եւ վերակացու շինուածոց հրաշակերտ եկեղեցւոյն գտանիւր հրամանաւ ներսէսի մինչ էր նա ի հալածանս յերկիրն Տայոց». Յովհ. կաթ. պատմութիւն, Երուսաղէմ. 1867. գլ. 1. էջ 445.

Գրիգորի»¹⁾: Նոյն բառերով, հետևապէս ոչ անկախ Անեցուց, ս. Գրիգորի շինութիւնը յիշատակում է նաև Մխիթար Այրիվանեցին, միայն թէ նա 641 թիւն է տալիս, հաւանական սիալ գոչագրութեամբ²⁾:

Թէև պեղումը էական մասերով արդէն վերջացել է, բայց Խաչիկ վարդապետը դեռ յօյսը չի կտրել. նա հաւատացած է, որ կդունի կամ Ներսէսի շիրիմը կամ մի ուրիշ արձանաքար ճշշտ թուականով։ Սակայն կարելի է վճռապէս պնդել, որ գտնուելիք թուականով արձանագրութիւնը կարող կլինի միայն մի քանի տարիների սահման որոշել, ոչ աւելի, որովհետև բարեբախտաքար պատմագիրները արդէն նշում են թուականը։

Բացատրելով այն հաւանական պատճառը, որ դրդել է Ներսէսին ս. Եջմիածնին կից նոր եկեղեցի և նոր կաթուղիկոսական տուն շինել և որոշելով շինութեան ժամանակն ու տեղութիւնը, տեսնենք թէ պատմագիրները ինչ են զրում այդ շինութիւնների մասին։

1) Սամուէլ Անեցւոյ հաւաքմունք ի զրոց պատմագրաց, Վաղարշապատ 1895. էջ 85։

2) Մխիթար Այրիվանեցի ժամանակագրութիւն, Ա. Պետերբուրգ 1869. էջ 65։

Դ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ.

Ներսէս Երբորդը պատմութեան մէջ յայտնի է Շինող մականունով¹⁾: Բացի Զուարթնոց եկեղեցուց յիշւում են նրա շինած երկու ուրիշը՝ ս. Դրիգոր եկեղեցին և ուսաւորչի կալանաւորման տեղում՝ Խորվիրապի վրայ և մի մատուռ կամ վկայարան Դվին քաղաքում, արաբների ձեռքով հրդեհուած ս. Սարգսի վկայարանի տեղը, որի մէջ նա թաղեց արաբական արշաւանքների ժամանակ բազմաթիւ կոտորածների մարմինները Պէտք է ցաւել որ ոչ մէկը այդ երեք եկեղեցիներից կանգուն չէ մնացել, որպէս ով կարելի լինէր լրիւ գաղափար կազմել Ներսէսի շինարարական ճաշակի մասին: Իրաւ է Խորվիրապի վրայ կանգուն է մի տաճար, բայց նա յետին ժամանակուայ՝ տասն և եօթներորդ դարու կիսուայ շինութիւն^{է 2)}: Սակայն ս. Սարգսի վկայարանը և Խորվիրապի եկեղեցին առանձին աշքի ընկնող յատկութիւններ չեն ունեցել: Սեբէոսը մինչև անգամ հարկ էլ չի համարել նոցա մասին բառ կորցնելու, իսկ Ցովհաննէս կաթուղիկոսը, որ սիրում է իւրնկարազրութիւններն ու պատմութիւնները զարդարել զանազան մակդիրներով, յիշում է այդ շինութիւնները հարեանցի կերպով, առանց աւելորդ բառ զործ դնելու³⁾:

1) Պէտք է նկատել, որ այդ մականունը առաջին անգամ գործ է գրել Մխիթար Այրիվանեցին եւ գործածական է դարձել մանաւանդ նորագոյն եկեղեցական պատմութեան մէջ:

2) Ալշան. Այրարատ. էջ 436—457:

3) «Եւ կացեալ (Ներսէս) յաթոռ հայրապետութեան ամփոփեալ հաւաքէր զբազմութիւն դիակացն անկելոց, եւ ի նմին տեղ վերստին շինէր գնրդեհեալ վկայարան մեծի նահատակին Սերգիոյ, Զկնի ապա շինէ տաճար սրբութեան եւ ի վերայ վիրապի սրբոյն Գրիգորի, ուր ի մէջ Թունաւորացն Թաղեալ առաքելանուէր այրն Աստուծոյց: Ցովհ. կաթ. զլ. Ժթ. էջ 106. Ներսէսի շինած երեք եկեղեցիները յիշատակում են նաեւ

«Եինուր» մականունը Ներսէսը անշուշտ ստացել է Զուարթ-նոց Նկեղեցին կառուցանելովը, որի մասին բոլոր պատմագիրները հիացմունքով են խօսում:

«Յայնոմ ժամանակի» գրում է Անրէսոս պատմագիրը, «արեկի միտո իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս չինել իւր ընակութիւն մերձ առ առ քր Նկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին ի վերայ ճանապարհին՝ յորում առեն ընդ առաջ եղև թաղաւորն Տըրդատաւ՝ սրբոյն Գրիգորի:

Նինեաց անդ և Նկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զօրացն եւ շինեաց Նկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատույն որում նուիրեացն»¹⁾:

Ասողիկը անկախ նկարագրութիւն չէ տալիս, այլ ակնյայտնի կերպով օգտում է պատրաստի աղբիւրից:

«Ներսէս ... շինեաց զվկայարան սրբոյն Գրիգորի ի վերայ վիրապին յԱրտաշատ, և զմիւս ես հրաշապայծառ Նկեղեցին զուուք Գրիգոր ի Վաղարշապատու առապարին զանազան յօրինուածով»²⁾: Ասողիկը անձամբ Նկեղեցին չէ տեսել, եթէ տեսել էլ է, լուսութիւն է պահպանում, ուրիշ տեղում հաջորդելով Նկեղեցու կործանումը:

Դրա հակասակ երբ կարդում ենք Յովհաննէս կաթուղիկոսի ողերուուած նկարագրութիւնը և մանաւանդ ի նկատի առնելով նրա հազորդած մի քանի մանրամասնութիւնները, կարելի է ամենայն հաւանականութեամբ ընդունել, որ նա չէն և պայծառ է տեսաել Նկեղեցին և հիացել նրա ճարտարապետութեամբ: Ահա նրա նկարագրութիւնը. «Դարձեալ յուսացեալ ի Տէր (կաթուղիկոսն Ներսէս), և ոչ ածեալ զմտաւ զիրթական արշաւանս հինիցն թըշնամեաց, զեղեցիկ իմ մոլութեամբ դնէ ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տան Աստուծոյ ըստ անուանակոչութեան սրբոյն Գրիգորի, յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Գրիստոսի Խոկ ի հիմնարկել դաստուածակերտ փարախն բանաւոր հօտին նրիստոսի ի ներքոյ չորից սեանցն հաստահեղիւսիցն բաժանեալ դնէ զնիւարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի յանշուշտ մեացականութեամբ պահել գանձան երկնաւորի ի գերչաց ապականողաց, և ի պարծանս հաւատոյ քրիստոնէականն

Ասողիկ (Ս. Պետ. 1883 թ.)։ Բ. գլ. Բ. էջ 88. Ս. Անեցի. էջ 85. Վարդան (Մոսկվա. 1861). էջ 93. 94. Մխ. Այրիվանեցի. էջ 65. Գանձակեցի (Վենետիկ 1863). էջ 54.

1) Անրէսոս. էջ 486.

2) Ասողիկ. Բ. գլ. Բ. էջ 88. 89.

կարգացի Խսկ զքրիստոսազբոյմ և զպատուական զլուխն ոչ ի խորոշ այլ արտաքոյ զզրոցի եղեալ՝ դնէ ի զանձարանս աստուածութեանն ի յոյս բարեաց փափագողաց նմա և ի բժշկութիւն ախտակրելոց¹⁾:

Ասողիկն ու Յովհաննէս կաթուղիկոսը եկեղեցին այլ ևս չեն կոչում երկնային Զուարթունների, այլ ո. Գրիգոր Լուսաւորչի անունով և այնուհետև բոլոր պատմագիրները միայն այդ անունը զիտեն։ Անուան փոփոխութիւնը անշուշտ կապ ունի Լուսաւորչի մասանց տեղափոխութեան հետ, մի հարց, որը չնորհիւ Խաչիկ վարդապետի անհեթեթ ենթադրութիւններին, մաքեր պղատորելու առիթ ծառայեց և նրա մասին լուելեայն անցնել չենք կարող Բայց նախապէս ծանօթանակը Մովսէս Կաղականդացու պատմութեան հետ ևս, որ թէ եկեղեցու շինութեան և թէ մասունքների տեղափոխութեան մասին այնպիսի մանրամասնութիւններ գիտէ, որ ուրիշ ոչ մի պատմագիր, Մովսէսից անկախ, չզիտէ։

Մ. Կաղականդացին պատմում է, որ Աղուանից Վարագ-Տըրդատ բարեպաշտ իշխանը Խսրայէլ եպիսկոպոսին ուղարկում է Հայոց կաթուղիկոսի և Արարատեան աշխարհի բարեպաշտ իշխանի մօտ սէր և դաշն հաստատելու. Ըներեալ էր իշխանն և մեծ զօրավարն Հայոց ի Թորգանայ ի Դարանադեաց գաւառէն զպատուական նշխարս սրբոյն Գրիգորի բոլորովին ամենայն ոսկերգն հանդերձ յաշխարհն Հայոց յԱյրարատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաք, և հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցւոյն դոր Մեծին ներսիսի շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի²⁾։

Վարդան պատմագիրը միացներով Յովհաննէսի և Մովսէսի պատմածները, վրան էլ աւելացնում է մի երրորդ աւանդութիւն, ըստ որում Լուսաւորչի նշխարհները գտնուում էին Կոստանդնուպոլուում և այնտեղից են բերուել Հայաստան։

Հասկանալի է, որ Լուսաւորչի նշխարհների տեղափոխութեան խնդիրը եկեղեցու շինութեան հետ ինքն ըստ ինքեան կապ և կարեւութիւն ունենալ չէր կարող, եթէ, առաջին, Յովհաննէս կաթուղիկոսի անսովոր պատմութիւնը չլինէր, որ երկար ժամանակ հայ բանասէրների կողմից իրեն զուտ ճշմարտութիւն է ընդունուել և, երկրորդ, եթէ չնորհիւ այդ պատմութեան, պեղումների տեղը նորագոյն առասպելների մի մեծ հիւսուածք չստեղծուէր։ Այդ հանգամանքն ի նկատի ունենալով, կիորձենք ի մի ամփոփել Լուսաւ-

1) Յով. կաթ. զլ. ԺԹ. էջ 106. 107.

2) Մ. Կաղականդացի, զիրք Բ. զլ. 15.

ւորչի մասունքների մասին եղած յայտնի տեղեկութիւնները, որպէս զի ցոյց տանք թէ արդեօք նշխարները կամ նրանից մաս բերուել են Զուարթնոց եկեղեցին¹⁾:

Մ. Խորենացու պատմելով Լուսաւորչը կեանքի վերջի օրերը առանձնացաւ Դարանազեաց գաւառի Սեպուհ լեառը և, մինչն իւր վախճանը, ապրեց այն այրում, ուր իրենից առաջ նգնել էր Մանիա կոյսը, Հովիւները թաղեցին նրա մարմինը. առանց իմանալու թէ ով է նաև Երկար ժամանակ անցած Գառնիկ ճգնաւորը գտաւ նրա նշխարները և թաղեց Թորդան գիւղում, ուր արդէն թաղուած էին ո. Վրթանէսը և ո. Յուսիկը²⁾, Փաւատոսը, առանց այդպիսի առասպելների մէջ մտնելու, պարզօքէն յայտնում է, որ Դարանաշեաց գաւառի Թորդանի եկեղեցին պատուի էր ովան գերեզմանցն Հայրապետին Դրիգորի³⁾:

Միայն թէ հինգերորդ զարուց Լուսաւորչի նշխարները պաշտամոնքի առարկայ էին ըստ վկայութեան Դ. Փարքեցու. Պարսկաստանից Հայաստան են վերադառնում Վարդանեանը, արտաքուստ քրիստոնէութիւնն ուրացած. նոցաւ ընդառաջում են եկեղեցու պաշտօնեաները հետներն ունենալով Փրկչի խաչի մասը և գնդշխարս սրբոյ առաքելանման նահաստակին Գրիգորիւ, Նմանապէս Յոհան Մանդակունին ո. խաչով և Գրիգորի նշխարներով է ընդառաջանում Վահան Մամիկոնեանին, որ իրքն Հայոց սպարապետ Պարսկաստանից Դվին էր գալիս⁴⁾. Առաջի անգամ ընդառաջել են Վաղարշապատ աթոռանիստում, երկրորդ անգամ Դվինում, ուր փոխուած է աթոռը:

Երբ մի կողմից հաստատ տեղեկանում ենք, որ Լուսաւորչի մասունքներից կային. հինգերորդ դարում Վաղարշապատի և Դվինի

1) Մ. Մաերեան, Պատմութիւն դիւտի եւ նշխարաց ս. Գրիգոր Լուս. Ճուաքաղ 1839 թ. Զ—Ը. Կ. Կոստանեան «Ս. Լուսաւորչի աջը», Վաղարշապատ 1896 եւ Յուսիկ եպիսկոպոս Մովսիսեան վերոիշեալ յօդուածում Արարատ 1902. էջ 1058—1054. Տես նաեւ Պատկերայարդութիւն, էջ 182—184 եւ Ծն. 44. 47 եւ Կ. Վ. Արարատ. 1904 էջ 345—345.

2) Մովս. Խորենացի Բ. զլ. ՂԱ.

3) Փ. Բիւզանդ. զլ. ԺԴ.

4) Պատմագիրը Հայոց. Վաղար Փարպեցի, Թիֆլիզ. 1904 իթ. (էջ 55) եւ ՂԵ. (էջ 416).

կաթուղիկոսարամններում¹), ռտարոսի է կարդալ կազականդացու և Յովհաննէս կաթուղիկոսի ցուցմունքները, թէ միայն եօթններորդ դարում Լուսաւորչի նշխարները հանուեցին Թորաւանից և բերեւ լով տեղաւորեցին չորս սիւների հիմքերում կամ նորաշէն եկեղեցու յարկի տակ; այն էլ ամրոգջութեամբ ինչ խօսք որ Փարքեցու վկայութիւնը աւելի ծանրակշու է: Միայն Բնչակէս մնկնել միաւների ցուցմունքները, Դեռ մի այլ աւանդութեամբ Լուսաւորչի նշխարները Ձենոն կայսեր ձեռովով տարուել են Յունաստան (Սուփերք Հայկ. Զ.) և մի հրաշքով վերստին բերուել Հայաստան (Վարդան, 94):

Թէ զանազան աւանդութիւններ և առասպեկներ կիրառուէին հայ ժողովրդից այնքան մեծ պաշտամունքի արժանացած սրբի նշխարների շուրջը, շատ բնական է: Պատմական քննութիւնը միայն մի գործ կարող է կատարել, ցոյց տալ, հնարաւոր եղած չափով, այդ առասպեկների ծագումը և իրար հետ ունեցած առընչութիւնը: Այդպէս նայելով, տեսնում ենք, որ Լուսաւորչի մասունքների Զուարթնոց եկեղեցին բրնձը իրական պատմական հիմունք ունի, բայց ահասպեկներով գունաւորւած է:

Սերէոսը բացորոշակի ասում է, որ Ներսէսը եկեղեցին շինել է պանուն երկնալին Զուարթնոցն, այսինքն ի յիշատակ Լուսաւորչի զիւրուայ տեսլեան մէջ երևացող երկնային դօրքի բազմութեանը²): Հետեապէս Ներսէսը ամեննեին չի էլ մտածել ո. Գրիգորի անուան եկեղեցի շինել, մինչդեռ յետապայ պատմիչները այդ անունը միայն գիտեն և Զուարթունների անունը ամեննեին գործ չեն ածում: Ո՞ր-

1) Մ. Կազականդացի (Ա. դի. ԻԱ.) պատմում է, որ Աղուանից Վաչագան Թագաւորը Լուսաւորչի Հուկիսիմէի եւ Գայիանէի նշխարների մասիրը տարել էր «ի Դարաննող զիւզն», որ է ի նահանգին Արցախու. զոր էր բերեալ երիցուն Մաթէ անուն կոչեցեալ ի Յովհաննէս Հայոց կաթուղիկոսն» (Մանդակունի):

2) Ագամանգեղոսի պատմած տեսիլը բաշածանօթ է, Լուսաւորից իւր բարզութիւնը վերջացնելուց յետոյ երազում տեսնում է, որ Վաղարշապատում բացւում է երկնքի հաստատութիւնը եւ այնտեղից երկիր շողը է կաթում եւ դորա միջով երկնային հրեշտակների անթիւ բազմութիւն իշնում բարձրանում են. Ապա երեւում է Միածինը ոսկի ուռը մնուին, որ զարկելով դաշտը հարթ հաւասար է՝ դարձնում եւ որոշում Կաթուղիկէի եւ նահատակ կոյսերի վկայութիւնների շինութեան տեղերը (Ագամանգեղոս, Թրդլիզ 1882, էջ 428—440):

տեղից պիտի առաջ գար անունների փոփոխութիւնը, միակ բայց ատրութիւնն է—նշարների տեղափոխութիւնից¹⁾:

Յովհ. կաթոլիկան և Մ. կաղականդացին վերև յիշառակած հատուածներում միայն մի ընդհանուր տեղեկութիւն ունեն, որ կուսաւորչի մարդինն ամբողջութեամբ փոխազրել են Ներսէսաչն եկեղեցին, իսկ մանրամասնութեան մէջ այնքան տարբեր են, որ նոյն ազգին հազիւ թէ օգտուած լինին. Յ. կաթ. ասում է, որ նշարները տեղաւորել են չորս սիների տակ, իսկ Մ. կաղ.—Նուրաչն եկեղեցու յարկի տակ: Անպայման ուղիղ է վերջնը, եթէ պիտի մասնք դնէին, Անքուը չէր լոփլ և եկեղեցին Զուարթունների անունով չէր կոչիլ Յ. կաթ. ասում է, որ որքի գլուխու պահեցին յատուկ գլուցում և տեղաւորեցին և գանձաւրանս աստուածութեանն, որ եկեղեցու մէջ միայն սեղանը կարող է հասկացուի²⁾: Մ. կաղ. այդ մասին լուսութեամբ է անցնում: պիղման արդիւնքը հաստատել է Յ. կաթ.-ի ասածը: Անդանի վըրայ առաջ եկած մասի աջակողմում գտնուել է մատուանման մի արտասովոր փոքրիկ շինութիւն, գլուց, կիսաքանդ վիճակում, որը միմիայն մասանց համար պիտի ծառայած լինի Յ. կաթ. ասում է, որ մասունքը բերել են Թորդանից Մ. կաղ. ոչինչ չփափէ: Երբ հինգերորդ դարում նշարները հանուած էին, այլ ևս նորաչին կարող իրենց սկզբնական ամփոփման վայրում գտնուել Վերջապէս Մ. կաղ. բացարձակ յայտնում է, որ նշարները բերել է ոչ թէ Ներսէսը, այլ նրա յաջորդներից մէկը ևս Արարատեան երկրի իշխանը՝ Աղուանից Վարագատիրոցի ժամանակակիցը:

Ի մի ամփոփելով մեր բաղդատութեան արդիւնքը, կարող ենք եղբակացնել, որ ս. Գրիգորը մեանելով թաղուել էր իւր հայրենի սեպհականութիւն Թորդան գիւղի եկեղեցում: Հինգերորդ դարում նրա նշարները պաշտամունքի առարկայ են դարձել և այնուհետև նրա մասերը պահուել են այն եկեղեցում, ուր գահակալում էին: Հայոց կաթուղիկոսները³⁾: Եօթներորդ դարում այդ նշարների

1) Ս. Գրիգոր է գրում նաեւ Ղեւոնդ պատմագիրը: «Ներսէս շինող սրբոյն Գրիգորի»: Ա. Պետերուրդ 1887, էջ 44:

2) Եինութեան մասերը նկարագրելիս կտեսնենք, որ աւելի ուշ ժամանակում սեղանը սկզբնական դրութեան համեմատութեամբ կրկին անգամ մնացարուել է: որպէս զի կարելի լինէր տեղաւորել գլուցը:

3) Այդ շարունակում է մինչեւ մոր օրերը, Լուսաւորչի աջը Հայոց ընդհանրական հայրապետներն են պահում իրենց դահակալութեան եկեղեցիներում:

մի մասը Թորդանից թէ ուրիշ տեղից, բերել տեղաւորել են Ներսէսացին և կեղեցու բնմի վրայ, քարից յատուկ շինած գզրոցի մէջ: Երբ և կեղեցին ամրուել է, ամենայն հաւանականութեամբ մասունքներն էլ տեղափոխել են ուրիշ տեղ. թէ ուր անյայտ է¹⁾:

Մենք կարող ենք մատաւրապէս որոշել թէ որ կաթուղիկոսի օրով մասունքները բերին Զուարթնոցը Վարազտիրոցից յետոյ Հայաստանում իշխում էր Գրիգոր Մամիկոնեանը (654—685), որ իշխան էր կարգուել Ներսէս կաթուղիկոսի միջնորդութեամբ: Գըրիգորի ժամանակակից կաթուղիկոսներն էին, Անաստասը 666—671 թ., Խորայէլը 671—681 թ. և Սահակը 681—706 թ.: Երբ մանրագննին կերպով քննութեան ենք ենթարկում երկը կաթուղիկոսների անձնաւորութեանց և գործերի մասին մնեցած պատմական տեղեկութիւնները²⁾, շատ հաւանական է թում, որ միայն Անաստաս կաթուղիկոսը կարող էր դրդել Գրիգոր իշխանին մասունքները տեղափոխել Նոր և կեղեցին, այն էլ իւր կաթուղիկոսութեան առաջի տարիները, Ներսէսի մահուանից անմիջապէս յետոյ Անաստասը, Ներսէսի կամաւոր աքսորի ժամանակ ստանձնած լինելով և կեղեցու շինութեան վերակացութիւնը, անձմբ շահագրգառուած էր, որ և կեղեցին փառք ու հոչակ ստանար, մի կողմ թողած՝ որ նրա անձնական մերձաւոր յարաբերութիւնը Ներսէս կաթուղիկոսի հետ իբրև նրա սենեկապանի, փոքր խթան չէր փառարանելու Ներսէսի գործերը: Գրիգորն էլ նրան էր պարտական իւր աղասութեամբ արարական գերութիւնից և իւր իշխա-

1) Եկեղեցւու անուան փոփոխութեան վրայ գուցէ ազդել է նաեւ Լուսաւորի Զուարթուն այլաբանական անունը. Համեմատել հետեւեալ երդը.

«Ի յելս արեւու (ի հայս) արեւ ծագեցաւ մեզ արեւմոից»:

Զամապն արեգական ծածկոյթ Պետրոսեան հողմոյն հալածեալ.

Օրիորդ մարզուր հարսինն (Հոլիփումեայ) աւետիս տայր փեսային.

Զարթիր Զուարթուն անուն (Գրիգոր) ել զարթո զթմիեալսն ի մողաց.

Արի որ ննջէսդ ի զըքի. լուսաւու լիցի քեզ Քրիստոս.

Արեամբս ոռոգեմ (Ես Հոլիփու.) զերկիր հայոց.

Դու սերմանես մշակ հոգեւոր».

Այս գեղեցիկ հատւածը առաջ է բերում Հ. Ալշանը Արեւելք Լուսաւորութեան Հայոց յօդուածում. Բազմ. 4900. 404. 405:

2) Տես Ասողիկ. էջ 99. 100. 100. Սամուէլ Անեցի. 84. Վարդան. 97:

նուրիթեամբ, ուստի մեծ հաճոյքով կկատարէր Անաստասի առաջարկութիւնը¹⁾:

Ե.

ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԲ.

Սերսէսը կաթուղիկոսական տան և նորակառոյց եկեղեցու համար ընտրելով մեր նկարագրած բարձրաւանդակի լայն փոռուած բլուբներից մէկը, աշխատեց զարդարել շրջակալքը, Թասախ գետից ջուր բերելով և այնանդ ծառեր ու խաղողի այգիներ տնկելով:

«Ած ջուր» զրում է Սերէսոսը ևն երեր զգետոյն և արկ ի դորձ զամնայն վայրս առապար. անկեց այգին և ծառատունկս և շուրջ անակի պատաւորեաց զբնակութեամբն գեղեցկաղիք յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառա Աստուծոյց²⁾: Աւերակների շուրջը տիրում է նախկին ամայութիւնը. մացել է նախկին շրանցքի և շրջապարսպի հետքերը, որը երկար տարածութեամբ շարունակում է: Այդիների և ծառատունկերի նկարագրութիւնը տալիս է նաև Յովհաննէս կաթուղիկոսը, որը իրենից աւելացնում է, թէ ջուրը բերուել է Թասախ գետից. «այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդումարկաց ըստ պայմանի քազաքականաց և ածեալ ջուր ի Թասախ գետոյ զամնայն աւազախիտ առապար

1) Խնչպէս յետոյ կտեսնենք Գրիգոր իշխանը շինեց երկու հոյակապ եկեղեցի, եղուարդ եւ Արում գիւղերում. մի եկեղեցի էլ շինեց Անաստասը իւր մայրենի Ակոռի գիւղում. Եթէ սորա մասունքները առաջուց լրերէին Զուարթնոց եկեղեցին. ամենայն հաւանականութեամբ կը տեղափոխէին իրենց նորակառոյց եկեղեցիներից մէկն ու մէկը. մանաւանդ Արումի ս. Գրիգորը. որը մինչեւ այժմ էլ կանգուն է եւ խիստ հոյակապ շինութիւն է:

2) Սերէսոս. էջ 186.

գաշտավայրն ի գործ արկանէր, անկէր այդիս և բուրաստանս ծաղկոցաց՝¹⁾:

Ներկայումս էլ Խաչիկ վարդապետը օգտուելով հին ջրանցքի հունով, Քաթախի մեծ վտակից ջուր է տարել դէպի աւերակները և շուրջ բոլոր անկել է այդի և ծառեր:

Այդ առանձնարանում, զարդարած և կենդանացրած փարթամ և լաւ մշակուած բուսականութեամբ, հեռու մարդկային անմիջական բնակարաններից, Ներսէսը անցրեց իւր կեանքի վերջին օրերը և մեռնելով թաղուեց նոյն տեղը: Ահա թէ ինչ գովասանական խօսքերով է Յով. կաթ. յիշատակում նրան:

Եմեկ իրեն եկաց մեծ հայրապետն Ներսէս յառաջնորդութիւն առան իւրում ամս քսան, հրաժարեալ ի կենաց ասատի, եղաւ մարմինն ի հանգստարանի անդ, զոր իւրովի իսկ յօրինեալ էր ի հիւսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանի և, որ ըստ արժանի աթոռոյն իւրում նախահօրն էր կարգեալ յարկ: Եւ այսպէս երջանիկ և հոչակաւոր և հոյակապ երեեալ ի հարս, ժամանեաց ի հանգիստ անմահական կենացն ի պարս առաքելական դասունք²⁾:

Ներսէսի կառուցած հոյակապ եկեղեցին և հաւանական նաև նրան կից ընդարձակ շինութիւնները երկար ժամանակ կանգուն չմնացին: Ոչ ճիշտ տարին է յայտնի և ոչ էլ կործանման հաստատուն պատճառը, սակայն մենք հնարաւորութիւն ունինք մի որոշ ժամանակամիջոցում հետեւել թէ որքան տեսեցին նրանք և մօտաւորապէս երբ կործանւեցին:

Մ. Կաղականդացին դեռ չգիտէ նրա կործանումը. Նա հիւսցմամբ է խօսում տաճարի գեղեցկութեան վրայ, անելով այսպիսէ առասպելանման և դժուար հաւատալի մի պատմութիւն՝ իր թէ շինութեան փողը յունաց Կոստանդին կայսրն է տուել և, յետոյ հրաւէր տաճանալով, եկել է եկեղեցու օծման հանդիսին: Նա այնքան է հիացել նրա գեղեցկութեամբ, որ շինող վարպետին առած հետը տարել է Բիւլանդիոն, որ այնտեղ էլ համանման մի տաճար չինի. բայց ճանապարհին վարպետը մեռել է և կայսրը նպատակին չի հասել³⁾:

«Սա (Ներսէս) էր հայրադիր նորին Կոստանդնի և գանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարախն բանաւոր հօտին ի քաղաքու դաշտի ի սուրբն Գրիգոր և ի նաւակատիս կոչեաց զթա-

1) Յովհաննէս կաթուղիկոս. 442, 445.

2) Յովհաննէս կաթուղիկոս. 443:

3) Մ. Կաղականդացի, էջ 235.

դաւորն Հոռոմոց, որ յաւէրժ հիացեալ ընդ շինուածն ետ հրաման շինողացն զնալ զինի իւր, զի զայն ձեն յարմարեսցէ ի պալատանն, եւ ոչ ժամանեալ գաղատոսն ի ճանապարհին վախճանիւ:

Իններորդ դարու աշխարհաւեր երկրաշարժից յետոյ, որին զո՞նաց Դվինի հոչակաւոր ս. Գրիգոր եկեղեցին, Թովմա Արծրունու ասելով Գէորգ երկրորդ կաթուղիկոսը թողնելով Դվինը տեղափոխւեց ներսէսաչէն կաթուղիկոսարանը, «Եւ թողեալ զբնակեն ի Դուքնն՝ ելեալ բնակեցաւ ի նոր քաղաքին ի մնե եկեղեցոցն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելոյ Տեառն ներսիսի Երկրորդի¹⁾ Հայոց կաթուղիկոսիւ:

Թովմա Արծրունին իւր պատմութիւնը հասցրել է մինչև 980 թ. և որովհետեւ նա, յիշելով Գէորգի տեղափոխութիւնը, ոչ մի բառով չի ակնարկում եկեղեցու վնասաւած կամ աւերակ լինելը, կնշանակէ եկեղեցին շէն էր: Դրան ապացոյց է նաև Յովհ. կաթ. նկարագրութիւնը. սա իւր պատմութիւնը վերջացրել է 925 թ., Թովմայի պէս խօսում է միայն շէն եկեղեցու մասին: Հետեւապէս մինչև ամսուազն 980 թ. եկեղեցուն ոյինչ չէր պատահել²⁾:

Սակայն մօտ կէս դար անցած Ասողիկը պատմում է, որ նա կործանւած էր և Հայոց Գագիկ թագաւորը նրա նմանութեամբ մի եկեղեցի շինեց Անի քաղաքի Մաղկոցաձոր կոչւած թաղում: «Յայնմ ժամանակի, յորում լնոյց լրութեամբ ամն Ռ մարմանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ, ի Վասիկ կայսեր յաւուրս, Գագիկ արքայ Հայոց խորհուրդ բարի ի յանձին կալեալ՝ զմնաւէն եկեղեցին, որ ի Քաղաքուղաշտի, անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր վիեալ և կործանեալ՝ կամնցաւ նոյնաձեւ չա-

1) Պարզ սխալ է փոխանակ ներսէս Երրորդի: Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Սրծունեաց. Ս. Պետեր. 1897 էջ 234:

2) Ս. Անեցին (էջ 87) գրում է «Զի. ս. Գրիգորի վանրն այրեցաւ». Յուսիկ Եպիսկոպոսը (Արարատ. 1902 էջ. 885), այդ համարում է Զուարթնոցը. Ս. Գրիգոր անունով եկեղեցի զիտենք Բագաւանում. Դվինում. Խորվիրապում եւ Վաղարշապատում. Դվինի եկեղեցին փայտից լինելով մի անդամ վառւել է. չգիտենք ինչից էր շինւած Խորվիրապինը եւ Բագաւանինը. բոյց Զուարթնոցը ամրողովին քարից լինելով. վառելու ոչ մի հնարաւորութիւն չկար: Հաւանական է կարծել, որ վառւել է Բագաւանի ս. Գրիգորը (Ն. Փարքեցի. ՀԶ.), որովհետեւ նա իբրեւ վանք յայտնի էր իւր միաբաններով եւ մի անգամ Արդմնլիք ամիրայի Մահմետ զօրականի հրոսակներից աւարի է ենթարկւել եւ միաբաններից զրկւել. (Ասողիկ. էջ 455. Ս. Անեցի. էջ 85):

փող և յօրինուածով յարդարել ի քաղաքին Անույ, հիմնարկեալ ի կուսէ Մաղոկցաձոր ձորոյն ի բարձրավանդակ տեղւո՞ն, տար-
փատենչ տեսողացն, մեծատաշ, վիմարդեան, կոփածոյ վիմաք մա-
նուածո քանդակաւ յօրինեալ, լոյսանցոյց պատուհամնօք, երրակի
դրանց դրանդեզօք, պանչատես տեսլեամբ գմբէթաւորեալ, գունակ
գերամբարձ և երկնանման գնդին»¹⁾:

Փրկչական հաղար թուականին Գաղիկը ընդօրինակեց Զուարթ-
նոցը և այն ժամանակ նա սիլեալ և կործանեալ էր: Սակայն պատ-
մագրի խօսքերը անորոշ են. Կործանումը կարող էր տեղի ունենալ
նաև ընդօրինակութիւնից մի քանի տարի յետոյ: Յամնայն դէպս
եկեղեցու կործանման ժամանակը 925—930 թուականից առաջ
չէր և ոչ էլ 1000 թուականից յետոյ: Միակ պատմագիրը Միխ-
թար Այրիվանեցին է, որ յայտնում է թէ եկեղեցին կործանել են
տաճէկները (այսինքն արաբները) և թէ Գաղիկի շինածն էլ կոր-
ծանւել է տաճներեկերորդ դարում²⁾:

Գաղիկի եկեղեցու աւերակները անձեռնմխելի մնում են.
1903 թ. նոցա վրայ ուշադրութիւն դարձեց լուսանկարիչ և գե-
րասան պ. Վրոյը և 1904 թուի ամառը գնալով այնտեղ, անձամբ
գիտեցինք: Աւերակները ահապին կոյս են, որի մէջ կանգուն մը-
նացել է սիւնանման պատի մի կտոր, մայր տաճարի սիւների ցըց-
ւած մասնը և պատերից շատ աննշան մաս: Դուրս մնացած երե-
ւացող քարերի վրայ չկայ Զուարթնոցի համապատասխան քան-
դակներ, այդ կարող էին երեան հանել պեղումները: Սիւնազարդի
երկու խոյակը ընկած էին քարակոյտում եւ դռախ էին որ իրաւունք
են տալիս կարծելու, որ խկազէս աւերակների այդ կոյտն է Գա-
ղիկի ձեռքով շինած եկեղեցին: Խոյակները ըստ երեսյթին նման
են Զուարթնոցի խոյակներին: Բայց արուեստով խիստ տարբեր
են: Աբակը քառանկիւնի է. երկու ոլորակները կամ խոյերը և
նոցա միջի մեղալեօնը ներկայացրած են երեք իրար հաւասար և
համակենդրոն շրջանների օրնամենտ. զամբիւլը հիւաւածք չունի,
այլ մաքուր տաշած է և շրջանակածն է: Այդ եկեղեցու պեղումը
անհամեմատ հեշտ դորդ է, որովհետեւ այնպիսի ծանր աւաղի շերտ
չկայ հաւաքւած և երեսում է, որ էսկան մասներից շատ բան չպիտի

1) Ասողիկ, էջ 282. տես նաեւ Ա. Անեցի էջ 404:

2) Մխիթար Այրիվանեցի էջ 68. 74. երեւի նոյն աղբիւրից է
Կ. Գանձակեցին հաղորդում. «Եինեաց՝ (ներսէս) Սուրբն Գրիգոր զար-
մացուցին տեսողաց. որ յետոյ աւերեցաւ ի տաճկացն». էջ 54.

կորած լինի: Փուլքի զանգվածների մնձագոյն մասը խոշոր բեկոր-ներով չրջած է եկեղեցու դէպի հարաւային կողմը:

1905 թուին ամառը մնաք այցելեցինք պլր. Մառի նոյն թուին սկսած պեղումները, աշխատանքները կիսատ էին, չըր բացւած և մաքրած շինութեան ամբողջ յատակը. կիսատը նա լրացրել է հետեւեալ ամառը Բացած մասերը եկեղեցու հիմնական պատկերը վերականգնելու. համար առերեսոյթ աւելի նիւթ չէին տալիս քան Զուարթ-նոցի աւերակները.—պատերը և սիւներից մի քանիսը կանգուն էին. նոյն իսկ պահել էին սիւների վրան խոյակներ, բայց տակաւին չըր երևում թէ այդ սիւների վրայ վերին յարկը և գըմքէթը ինչպէս էին զասաւորւած: Հետեւեալ տարւայ պեղումները անշուշտ շատ միջոց կտային լրացնելու այդ թերին և իսկապէս գանւել է եկեղեցու մողելը Գագիկ թագաւորի ձեռին բռնած Բացի այդ որովհետեւ պեղման ժամանակ ճարտարապետ Թորոմաննեանը ներկայ էր և հետամուտ էր ամեն մի մանրամասնութեան, ուստի պէտք է հաւատալ, որ երբ պլր. Մառը լոյս կածի իւր աշխատութիւնների ուսումնասիրութիւնը, կարելի կլինի բաղդասառութեամբ վերականգնել նաև Զուարթնոց եկեղեցին իւր մանրամասնութիւն-ներով:

9.

ՆՈՐԱԳՈՅՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԶՈՒԱՐԹՆՈՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ.

Նորագոյն աշխատութիւններից առաջի տեղը թէ ըստ աւագութեան և թէ ամփոփ պարունակութեամբ պատկանում է Յովհաննէս եպիսկոպոս Շահիսաթունեանցին: Նա իւր Ստորագրութեան առաջին հատորում¹⁾ ի մի է հաւաքել մեր յիշած պատմագիրների հաղորդածները և անձամբ այցելելով աւերակները, համառօտ նը-կարագրել է նոցա իրական վիճակը, և հարաւակողմն ճանապարհն՝ որ տանի յերեան քաղաք, կան այժմ և երեխն իսկ որպէս հիմունք եկեղեցւոյն, և աւելի քան զմարդաչափ՝ բարձրութիւնը

1) Յ. Եպիսկոպոս Շահիսաթունեան, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ. Էջմիածնին. 1842 էջ 285—290:

սեանցն զուրկ յարտաքին կոփածոյ քարանց: Նմանապէս երեխն և հիմունք պարզապի նորա և բրգացն (?) և առ նովաւ սեննկացն իսկ¹⁾:

Ապա հ. Դեսնդ Ալիշանը Այրարատի (244—246) մէջ, ընդհանրապէս կրկնելով Շահլսթուննեանցին, տաճարի աւերման մասին մի ենթադրութիւն է անում. թէ արարները Հայաստանը և Հայոց եկեղեցիները աւերել և կործանել են երկու անգամ, եօթներորդ դարու կիսում և իններորդի սկզբում. այդ վիճակից չէին կարող խուսափել Ներսէսի փառահեղ շինութիւնները²⁾: Սակայն, շարունակում է նա, որովհետեւ Յովհաննէս կաթուղիկոսը տաճաներորդ դարու կիսից ոչինչ չի յիշատակում տաճարի աւերման մասին, ուրեմն պիտի կարծել, որ առաջի աւերումից յետոյ եկեղեցին նորից նորոգւել է:

Մեր հայեացքով հ. Ալիշանի ենթադրութիւնը զուրկ լինելով փաստական հաստատութիւնից, համոզեցուցիչ չէ:

Հայ պատմաբանները խօսելով Հայաստանի բազմաթիւ եկեղեցիների մասին, շատ հազարդիւտ դէպքում են այնպիսի գովասանքներ շայցել ինչպիսին շայցում են ա. Գրիգորի եկեղեցուն Գովարանել են այսպիսի մակդիրներով և դարձուածներով. բարձր տիեզեւածով և շինազ զարմանալեօն արժանի աստօւածային պատոյն (Սերէոս), մեծ և նրաւալի բազմապայծառ յարկ, աստօւածակերտ փարախ (Ցոլի. Կաթուղիկոս), բազմապայծառ եկեղեցի, զանազան յօրինուածով (Ասողիկ), բազմապայծառ փարախ, ընդ որ յաւերժ հրացեալ (իմա կայսր յունաց) (Մ. Կաղականդացի), զարմացուցիչն տիեզերաց (Միկիթար, Սամուէլ և Կիրակոս). Այդպիսի մեծ յափշտակութիւն հների կողմից բնական զօրեն հետաքրքրութիւն շարժեց նաև նորերի մէջ: Հ. Ալիշանը ենթադրում էր, որ թէն թշնամու ձեռքը աւերել է կենդանատիպ քարերը, «այլ անհնար է թէ որպէս զսան յամարանի լուծեալ ջնջեալ իցեն իսպառ ամննայն դրուակքն և քանդակք» և մեծ փափագ էր յայտնում, որ պեղեն աւերակները, հրապարակ հանեն նախնեաց ճարտարա-

1) Արդեօք Շահլսթուննեանի յիշատակած պարիսպներն ու բուրգերը այն աւերակները չեն. որը մենք համարեցինք նին քաղաքի աւերակներ ու բուրգեր. որոնք սակայն հին են Զուարթնոցի աւերակներից:

2) M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft Եւլն. Marburg 1905 էջ 62. ցոյց է տալիս, որ արարները երբէք առանձին մոլեռանդութեամբ չեն վերաբերւել դէպի քրիստոնեաների եկեղեցիները եւ անխնայ եւ առանց պատճառի կործանել այդ շինութիւնները:

պետական արուեստի գեղեցիկ հիւռածածները թացի այդ, նա յոյս ունէր, որ փորելով արձանագրութիւններ երևան կզան և կնպաստեն շինութեան թուականն և այլ մանրամասնութիւններ ճըշտելու¹⁾:

Վաղուց ի վեր ամենքի աչքի առաջ, Գէորգեան ձեմարանի բակում, ընկած էին Ներսէսի շինութեան բեկորները—չորս մեծ միակառուք սև քարից պատրաստած խոյակներ, վրաները փորագրած շինել տուղ կաթուղիկոսի անունը, յունարէն գրերով և լեզուով: Միանդամայն մոռացւած էր, թէ երբ, որտեղից և ինչ նըսպատակի համար էին այդ խոյակները բերւել ձեմարանի բակը, շատ քերն էին նրա վրայ ուշադրութիւն դարձնում: Եւ առա 1890 թ. գերմանացի գիտնական Յովսէփ Սարժիկովսկին, որ էջմիածին էր նկել տեղուուտեղը ուսումնասիրելու հայ-բիւղանդական գեղարուեստի յիշատակարանները, առաջինը հարկաւոր ուշադրութիւն դարձրեց այդ խոյակների վրայ և ճշտութեամբ սահմանեց նոցա ծագումը և պատկանելիութիւնը: Նա նոցա նկարը հրատարկեց իւր Շ. Էջմիածնի Աւետարան գերմաններէն լեզուով գրած և յետոյ հայերէնի թարգմանած աշխատութեան մէջ²⁾ և ուղիղ կերպով հաստատեց, որ այդ խոյակները Ներսէսի նկեղեցու մասերն են:

Այդ հանդամանքը դէպի Զուարթնոցի եղած հետաքրքրութիւնն աւելի զօրեղացրեց և 1893 թ. ամառը, տողերիս գրողը ձեռնարկեց փորել աւերակները: Պեղումը սկսեցինք հարաւային կողմի առաջի, այսինքն հիւսիս-արեմտեան սեան մօտից, հասցրինք մինչև եկեղեցու յատակը, բաց արինք միայն սեան դէպի եկեղեցու ներսը նայող կողմը: բայց ստիպւած եղանք կանգ առնել, որովհետեւ չէինք մտածել նախապէս օրինասահման թոյլտութիւն խընդրել և ստանալ:

Վերջապէս պեղումը սկսեց Խաչիկ վարդապետ Դատևանը: Նա աշխատեց հինգ տարի: Ընդհատումներ տեղի էին ունենում, գործը առաջ էր գնում կամաւոր նւիրատուութիւններով և նպաստներով: Նա ստիպւած էր յարմարել եկամուտի առատ կամ նուազ քղիսող հոսանքին: Մանաւանդ առաջի երկու տարին չափազանց մեծ էր նրա եռանդն ու ոգեորութիւնը, որովհետեւ բահի իւրաքանչիւր հարւած աւերակների կոյտերի տակից մի նորութիւն էր

1) Այրարատ. 246.

2) D-r Iosef Strzygowski, das Etschmiadziner Evangeliar, Wien, 1894. Հայերէնը տպւեց 1895 Թուին:

լոյս հանում, այցելուների թիւն էլ գնալով անում էր, ըստ այնմ անում էր եկամուտը, Վերջի երեք տարին համեմատաբար քիչ դործ կատարւեց. Խաչիկ վարդապետը մասամբ զբաղւած էր շըրջակայքի հողերը մշակելով և այդիներ տնկելով. պակասեց նաև այցելուների թիւը:

Պեղումների սկզբից Խաչիկ վարդապետը վաճիքից տեղափոխւց աւերակների մօտ, որպէս զի հնարաւորութիւն ունենայ թէ աշխատանքը կանոնաւոր առաջ տանելու և թէ հսկելու երեան եկող գիւտերի վրայ. Հեշտ չէր էջմիածնի վաճիքից չորս վերստարածութիւն Արաքատեան դաշտի սաստիկ շոքերին երթենկութիւն անել. ուստի նա զիշեր ու ցերեկ մեծ մասամբ այնտեղ էր մնում. Ամառը պատսպարտում էր աւերակի վիթխարի բեկորներից շապում, իսկ ձմեռը իւր փորած ստորերկեայ սենեակներից մէկի զլուխը մի կերպ ծածկել էր և այնտեղ էր ապրում. Միայն վերջին երկու տարին իր համար ժամանակաւոր բնակարան շինեց:

Մեծ էր նրա տոկումութիւնը և խիստ արդիւնաէտ եղաւ նրա աշխատանքը. Կմոռացին թեր և դէմ խօսակցութիւնները և Զուարթնոց եկեղեցու ճարտարապետական հարստութիւննը կմնայ անկորուստ իրրե զեղեցիկ յիշատակ արտայատւած հայ հողի վըրայ, հողի կոյտերից հրապարակ հանւած Խաչիկ վարդապետի ջանքերով:

Ե.

ՍԵՊԱԶԵԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆ.

Խաչիկ վարդապետը պեղումը սկսել է արևմտահարաւային անկիւնից, որտեղ բլուրը այնքան էլ բարձր չէր և աւագ ու խիճ քիչ կար հաւաքւած։ Առաջուց մասմբ վարժւած լինելով պեղումների՝ Խաչիկ վարդապետը խնամքով հետևում էր ջոկելու ամեն մի արժէք ունեցող բեկոր, օրնամենտ ունեցող քար։

1900թ. յուլիսի 11-ն նրա ամենայաջող օրն էր. նա գտաւ մի մեծ քար սեպաձև արձանազրութիւնով։ Քարը ընկած էր, զըրութեան կողմով զէպի զետինը շրջած, հարաւարեմտեան դռան մօսու Նա բաւական բարձր կոթող է, տափակ միակտուր քարից, 2,70 մետր երկար, 0,68 մետր լայն և 0,36 մետր հաստու։ Վրայի արձանադրութիւնը բաղկացած է 47 տողից, Քարի վերնի մասը կիսաշրջանաձև է, իսկ ներքեինը բարակացրած և երկու կողմից կտրւած է, որպէս զի այդ մասով ամրացնեի մեծ հիմնաքարի, կամ խարսխի մէջ։ Ընդհանուր տեսքը յիշեցնում է հայկական խաչքարերը, կամ մահմենդական գերեզմանների ցից ցից զլսաքարերը։ Արձանաքարի խարխսիը չի երևացել, անկարծիք նա այստեղ է ըերեւել ուրարտեան որեէ շինութիւնից և խարխսիը կամ սկզբնական տեղումն է թողնւել, կամ կոտրտւելով բերել գործ նն դրել և կեղցու շինութեան մէջ։ Քարը սև բազալտ է, կամ ամենակարծր հրարխային քար և նման է Արարատեան դաշտում և շրջակայքում գտնւած սեպաձև արձանազրութիւնների համար գործածած քարերին։ Նրը շինութիւնը փլել է, վեաւել է նաև այդ քարը, մօտաւորապէս միջից ճեղքւելով, բայց գրութիւնը շատ չի առւժել։

Հ. Խաչիկը ըստ արժանոյն գնահատելով զիւտի մեծ արժէքը, շտապեց նրանից հանած լուսանկարը և էստամպաժը (ծծան թղթի արտապութիւնը) ուղարկել Ա. Պետերբուրգ Կայսերական Հնագիտական Յանձնաժողովին, Մ. Վ. Նիկոլսկուն՝ Մոսկվա և գերմանացի ուսումնական Լեմանին՝ Բեռլին, Բենեաձերի վրայ աշխա-

տել են կ. Բասմանեանը և Յովհէփ վ. Սանտաձեանը¹⁾, բնեւա-
զրագէտներից միայն պ. Բասմանեանն է դժուար վերծանելին վեր-
ծանելի համարել և արձանագրութիւնը ծայրէ ի ծայր կարդացել,
միայն մի տեղ հարցական նշան դնելով (Արարատ, էջ 225, 226)²⁾,
միւսները խիստ զգուշաւոր՝ առ այժմ տուել են արձանագրութեան
ընդհանուր միաքը:

Ըստ Լեմանի, Սանտալմեանի և Գոլենիչնվի վերծանութեան, որ իրար շատ նման է, արձանագրութեան հնարաւոր թարգմանութիւնն այս է: Մենք առդէ տող կտանք չորս մասնագէտների ընթերցւածները: Դոցանից ամեն մէկը միւսներից անկախ է կարգացել արձանագրութիւնը և, ինչպէս համեմատութիւնից կտևնուի, էապէս բաւական իրար ն ան են:

8. վ. Ասմաղյան	Լեման	Գոլեմիչելի	9. Բանանեան
4 (դիք) Ք-զիսին Տեառ բազմու- թեանց, շայ-	Տաշ 4-6 Ժամացին. ույսորդի սիրով Օւսւան, Արքասով	Տաշ 4-6 Ժամաց- ույսորդի սիրով թեան, բազմու-	4 Առ եւդի, Ցւուն- ույսորդի այս
2 Վեմփարեւ- (այր) Ուսւան՝ սկզբանուցը- սրդի, կահզինեց:	որդին գրել ե ու- ել այս (որդինու- ույսորդինը) յա- րը հայր Խուզի-	թեան իւնոցին. (2) այս ապլ Ուս- ույսորդը.	2 Արժանի Ուսւա- ն Արդիքիթէն շի-
5 (այր) Արքասուայ- սրդի, կահզինեց: 4 (դիք) Ի-փառ- — Ք-զիսինեց Ժեանըըը	որդին թուզու- յա յայսակած ի գին (Բ է) կանչեան- ց սիրով և ույսորդի սիրով	(5) Արքասով որ- դին (Բ է) կանչեան- ց սիրով	4 Առ ազնի ենզ- գիսին
3 (այր) Ուսւան՝ (այր) Արքա- խուզին:	եմ Կուտրըին աւ- այս սիրով և ու- յսորդին:	ասուաններին ու-	5 Ուսւան Արդիքիթէ- ն շինան
			6 Արժեք Խուզինը
			7 Արժենի որ ամեն

4) Արձանագրութիւնը փորձել են կարդալ *В. С. Голенищев*,
Надпись Древне-Банского царя Русы II-го, Записки Вост. Отд.
Имп. Русск. Археол. Общества, т. XIII (СПБ. 1900 г.) էջ 086
—092 երկու տախտակով. *C. F. Lehmann*, Die neugefundenen Ste-
leninschriften Russas II. von Chaldia, Zeitschrift d. Deutsch. Morg. Ges.
65, Band. I, 1 Heft (Leipzig 1902) էջ 104—115. մի տախտակով.
Պ. Կ. Բասմանեան, Զուարթնոց եկեղեցու բեւելածեւ արձանագրու-
թիւնը. Արարտ. 1901 էջ 223 (տես նաև Արարտ. 1900 էջ 580
արձանագրութեան նկարը) եւ Քրանսեբէն լեզով. *La stèle de Zouartha-*
notz, Recueil XIII, 1901. Յովսէկի վ. Սանտալեան, Բագմավէպ. 1904
էջ 20—24.

2) Եւմանը Բասմանեանի մասին գրում է. «Թարգմանութեան մէջ կան յաջող տեղեր, բայց նա մեր դիտութեան ներկայ վիճակում անհիմն վստահութիւն է յանձն առել ամբողջովին Թարգմանելու արժանագրութիւնը».


— թայ — սբդեւ.		զորմանձներին (?) .	կողմեւ կը պատ-
6 առեւ զերիքը	(5) Առաստեւ Ար-	կողմեւ Նըմեն	
գուղութեաւեցի.	գիւստի սըդին (?) 8 Աւ իբ ամրոցի		ամամենը
7 Ասահա բաշ 8-ը 7-9. Ժիազը	յայտնաւմ է և եւս 9 Խլիւմն երկրի.		
մայ զիւսկին	Խուաւեցի Կուարը 10 Խլիւմն եւ Ելիքը		
այնորին	Մինի ուլուստը 11 Խուաւեցի Ասուլիքը		
8 Աւ յերկրէ այսի	Տաղ 7-9 Ժիազը 12 Ասահա անորուն էւ արժամը գըւ		
շամբացիկ	Անկայի անորուն էւ արժամը գըւ		
9 Կողմանն (դիք)		10 Աւ այս Հենքը	
գուղիս ամիս		14 Կանչեացի Նուրի	
նայի սըրեւ զըւ-		և կողի ժամեւ	
ապէւացի.		ըսկ պարտեղ մը,	
40 Աս զայսուկի Փայ- 8-ը 10-15. Բազը	8-ը 40-12 Առ 42 Կորա կենդրուած		
առայ առաջնու	Կոյ այլեայլ ձեռ-	սան խոսում է իւր անկեցի:	
41 Կանչեացի. 6 Խորկութիւնների է	Ճեղի ոյլուց առա-	ձեռնարկութիւնների 13 Սի քաղաք Նըմ	
փայտունէն գիւ-	Հովապէս մի խա-	մանին. (40) ևս կենդրուած հաս-	
ւըն (փայտ):	ղողի այզու և մի	այս սուզերը իւր աստելու համաց	
զամասն է	ցրանցի պատի	զողի ոյցինները (?) 14 Խլիւմնունի գուեն	
42 Զամասն այնու- մասին:		(12) անկեցի ան- լրման մը	
ցիկ կանչեացի		սան? սուզ ժամեւ 15 Պեղել ասէ և	
43 Գուղութիւն զիւ-		ըից և թագուարը գիւնեւունց — յա-	
նութիւն այնու		նըր (12) ևս նուն	
ցիկ և աւուր- հոգացոյ:		անկեցի 16 Առասյի (հրամա-	
44 Արևանագործիւն	8-ը 14 օլբանցին	նայ) գործադը.	
մի առ գետազն	Պանկէլ (գեղ) գե-	8-ը 14-15. ս(14)	բութւնին-
ժազացունեան	այց հլուարու կանչ-	լրանց (ի?) գետի 17 Ընդունեցի: Զըր-	լրանց:
(այց) Կանչեա- նեցին եմ քարե-	րից սըրի անունը	Ասրդ (?) գործու- մազի ան զո-	
նիուու:		նեան (sar(?) -da- բանցը լինուե-	
45 Կողմանի սը այ- Ուժէլ (ին) էս.		ru-ni-a-ni) (15) սու (?):	
նորիկ զանուն		և յինեցի 18 Խուացի Ասուունոյ	
46 (Կունցին ?) ըստ 8-ը 16-23 Բաւոր-		Համար գուանուկ մը	
հրամանի (այց)	Կում էն ամուսնա- 19 Պարտին զնէլ:		
թուաւույ:	ներին մասուցան-	Ունոր մը Խոզ-	
47 Խուացի զերկրա- շուն:		զի Ասուունոյ:	
ցիս վասն ար-			
ժանացրութեան			
արքային մեծի:			
48 Կառա մի (դիք)		20 Զուի ոյցար մը	
գուղիսի		ըստեկում է զու:	
49 Արքունիթեան —		Թիւ ազա Ասուու-	
սուզի: (ոյլուր		նոյ: սըրար մը	
մի) (դիք) Գուղ-		Արդինի Ասուունոյ:	
գիսի			
20 (Կունցին ?) ոյլ-		24 Երբ ընծայ ներ-	
եար մի (դիք)		կոյկելով այդ ա-	
Ցէիսուսու:		սուսնեներուն:	
		22 Զըր աւազանի ա-	
		սուսնեներուն հո-	
		մը:	
		23 Աւ մը սըր է	
		զնէլ Խուացի ա-	
		սուն նոյ:	

- | | | | |
|-----------|---|--|--|
| 20 | Ալիւր մի / զիք) | 24 | Ալիւր մը Խ-զգի
ասուծայ, զ անի
ոլիւր մը թէ-
իսպայ ասուծայ, |
| Ալիւր մի: | | | |
| 21 | (չիք) Քաղցիսի'
չիքն ի բար-
ձահա' կողք ?. | 25 | Ալիւր մը Ալիւրիկ |
| | իւզ: | (23) դառ Խ-զգի
ասուծայ (չո՞չ ?)
ուղար կամ թող
ման (24) ոլիւր
Խ-զգի ասուծայ.
26 Ալիւր մի (չիք)
Քաղցիսի' 4 ու-
իւր ... ? | շունչ յիշար Յերա-
յին կողքէ. (25) 27 Ալիւր հազր, ար-
ոլիւր Ալիւրիկ աս-
ման ... (և միւս
ասուծաներին ?). 28 Ալիւրիս, արայ
(26) Ի յիշասակ ?
Անիմ, զան ասոզ
լութեան կամ, (ի
անսայ) Խուսա-
կամ կամ ար 54 Բառ Քաղցիի
յին Արդիսուն ար 55 Անգ կամ թէ-
զան, հազր Բ-
դասորին, մեծ թ-
ուաւորին, Բառ-
արին (28) մ- 55 Անգ, ով որ վը-
իսպաների, Բայո-
նա (վան) Երկր 54 Ով որ այս կար-
Բառաւորին, (29) Գաղցիսի թէներին
Բառաւորց Բ-
իր մը վերացի
գաւորին, Էլանցին 55 Ով որ գետն ա-
(50) Տառա քաղա-
քի, մյուս քաղաքի ?, 56 Ով որ լոյս մէջ
Տառ 54-45. (51) Հայե,
Տառ 57 Օ-րիւ ով որ հե-
սի որդին ասու- |
| 22 | ... ? գիշի, հաց
իւզ: | | |
| 23 | (եղի) Խուսա-
(Ալուսաւթի)
Քաղցիսաց օր-
անզաց' | Տառ 23 գուազ-
(25) Դառ Խ-զգի
ասուծայ (չո՞չ ?)
ուղար կամ թող
ման (24) ոլիւր
Խ-զգի ասուծայ.
26 Ալիւր մի (չիք)
Քաղցիսի' 4 ու-
իւր ... ? | 26 Ալիւր մը Ալիւրիկ
յին կողքէ. (25) 27 Ալիւր հազր, ար-
ոլիւր Ալիւրիկ աս-
ման ... (և միւս
ասուծաներին ?). 28 Ալիւրիս, արայ
(26) Ի յիշասակ ?
Անիմ, զան ասոզ
լութեան կամ, (ի
անսայ) Խուսա-
կամ կամ ար 54 Բառ Քաղցիի
յին Արդիսուն ար 55 Անգ, ով որ վը-
իսպաների, Բայո-
նա (վան) Երկր 54 Ով որ այս կար-
Բառաւորին, (29) Գաղցիսի թէներին
Բառաւորց Բ-
իր մը վերացի
գաւորին, Էլանցին 55 Ով որ գետն ա-
(50) Տառա քաղա-
քի, մյուս քաղաքի ?, 56 Ով որ լոյս մէջ
Տառ 54-45. (51) |
| 24 | Ալիւր մի (չիք) | | |
| Ալիւր մի: | | | |
| 25 | (չիք) Խուսա-
(Ալուսաւթի)
Քաղցիսաց օր-
անզաց' | Տառ 23 գուազ-
(25) Դառ Խ-զգի
ասուծայ (չո՞չ ?)
ուղար կամ թող
ման (24) ոլիւր
Խ-զգի ասուծայ.
26 Ալիւր մը Ալիւրիկ
յին կողքէ. (25) 27 Ալիւր հազր, ար-
ոլիւր Ալիւրիկ աս-
ման ... (և միւս
ասուծաներին ?). 28 Ալիւրիս, արայ
(26) Ի յիշասակ ?
Անիմ, զան ասոզ
լութեան կամ, (ի
անսայ) Խուսա-
կամ կամ ար 54 Բառ Քաղցիի
յին Արդիսուն ար 55 Անգ, ով որ վը-
իսպաների, Բայո-
նա (վան) Երկր 54 Ով որ այս կար-
Բառաւորին, (29) Գաղցիսի թէներին
Բառաւորց Բ-
իր մը վերացի
գաւորին, Էլանցին 55 Ով որ գետն ա-
(50) Տառա քաղա-
քի, մյուս քաղաքի ?, 56 Ով որ լոյս մէջ
Տառ 54-45. (51) | |
| 26 | Ալիւր մը Ալիւրիկ | | |
| Ալիւր մը: | | | |
| 27 | (արգայի) Հուրիք.
արգայի յաղթու-
ուիք. արգայի | Տառ 26-50 Գուազ-
Բառաւորց, մեծ
Բառաւորց, Ալ-
ոյի Բառաւորց,
Բայոյի Բառաւորց,
արգայի Յաղթու-
ուիք (Անիմ) | 29 Ալիւր արգայից
Լութեան կամ, (ի
անսայ) Խուսա-
կամ կամ ար 50 Տառ Քաղցիի
յին Արդիսուն ար 54 Բառ Ալիւրիկ
զան, հազր Բ-
դասորին, մեծ թ-
ուաւորին, Բառ-
արին (28) մ- 55 Անգ, ով որ վը-
իսպաների, Բայո-
նա (վան) Երկր 54 Ով որ այս կար-
Բառաւորին, (29) Գաղցիսի թէներին
Բառաւորց Բ-
իր մը վերացի
գաւորին, Էլանցին 55 Ով որ գետն ա-
(50) Տառա քաղա-
քի, մյուս քաղաքի ?, 56 Ով որ լոյս մէջ
Տառ 54-45. (51) |
| 28 | (Երկր) Սուրպայ.
արգայի, (եր-
կր) Բիկինա. | | |
| 29 | Արգայի արգա-
յիս. հանկելու | | |
| 30 | (ի - գուշակի) | | |
| 31 | Խուսակ, քա-
զաք (?) Հուսակ: | | |
| 32 | (այք) Խուսա- | | |
| 33 | (այք) Արգիւ-
սայու - արգիւ: | | |
| 34 | Արգայի արգա-
յիս արգայի: | | |
| 35 | (այք) Խուսա- | | |
| 36 | (այք) Արգիւ-
սայու - արգիւ: | | |
| 37 | Արգայի. որ - որ
չիք-մի բանձայ. | | |
| 38 | Արգայի բանձայ: | | |
| 39 | Արգայի բանձայ: | | |
| 40 | Արգայի բանձայ: | | |
| 41 | Արգայի բանձայ: | | |
| 42 | Արգայի բանձայ: | | |
| 43 | Արգայի բանձայ: | | |
| 44 | Արգայի բանձայ: | | |
| 45 | Արգայի բանձայ: | | |
| 46 | Արգայի բանձայ: | | |
| 47 | Արգայի բանձայ: | | |
| 48 | Արգայի բանձայ: | | |
| 49 | Արգայի բանձայ: | | |
| 50 | Արգայի բանձայ: | | |
| 51 | Արգայի բանձայ: | | |
| 52 | Արգայի բանձայ: | | |
| 53 | Արգայի. որ - որ
չիք-մի բանձայ. | | |
| 54 | Արգայի բանձայ: | | |
| 55 | Արգայի բանձայ: | | |
| 56 | Արգայի բանձայ: | | |
| 57 | Արգայի բանձայ: | | |
| 58 | Արգայի բանձայ: | | |

59 շահումն բառեալ,		բան) կադեւե- 45 Ամբողջ ընտանի-
սպարութեամբ		ցրելու, ով քը, թէ նո-
40 . . ? բարբարի 40 սեպական ա- (59) (Երա) անունը 46 Աշգականները,		կոչելոցնեկ բոլորը մեկնեն.
երկրացւոց	նունը գրի. լինի	(40) Կը անունը 47 զնլեն և զեր-
44 (Երկրի) շեղեկմ նա մեկը Բիայնու- (44) ...		բախիցւոց յից. լինի մեկը կու-
բախիցւոց		(42) . . . (Բող)
42 (յերկրին) կու- լուից. Հաւդիմ, Տե- լուից. Արդիմիւ, ասաւուժութեալը		իսրաւու, Արդիմիւ,
լուիցւոց, (գիր) իսրաւու, Արդիմիւ, ասաւուժութեալը		ասաւու, Տե-
թաղական,	(Քալոր) ասաւուժ-	(45) Արդիմիւ (միւս)
43 (գիր) Անիսոս ները թող նրա ա- հաւու, Տե- նունը, Տրու մերմը,		ասաւուժութեալը
և, (գիր) Արդիմ- նունը, Տրու մերմը,		(44) Նրա անունը
նիս ասաւուժութեալը նրա յաւորդիներին,		(և) յիշասակը?
44 . . ? զանուն նորա երկրիս երեսից		45 Հարուսածեցւն լույն:
		(45) Նրա սերմը?,
46 . . . ? առցեն ի առնեկ նորա		նրա ընտանիքը?
47 (զանունայն) բուռ . . . ? 4)		(46) . . .
		(47) . . . մասնեն կոբառեանը:

Թէև ինչպէս նկատել ենք, բոլոր թարգմանութիւնների մէջ ընդհանուր կէտերը իրար նման են, հետևապէս արձանագրութեան միավոր միատեսակ է ըմբռնւած, բայց ամեն մի ընթերցող կնկատի, որ ամենից զգոյշը եւրոպացի մասնագէտն է, ապա ոուսը, իսկ աւելի համարձակ են հայ վերծանողները, մանաւանդ պ. Բաամանը. Այդ խնդրով պարապած շլինելով, յօգուտ մէկ կամ միւս թարգմանութեան կարծիք յայտնել դժւարանում ենք, բայց այս քանը զիտենք, որ չորսի մէջ աւելի մեծ հեղինակութիւն ունի զերմանացի Լեմանը և նա է ամենից զգուշաւորը. Արձանագրութեան լուսատիպ նկարը տես աախտակ ՏI, 5:

4) Արտագրելով այս թարգմանութիւնը՝ մի քանի բառեր. որ բնագրում կրկնակի փակագծերի մէջ էին կամ շղագրով զրւած. մենք աւելորդ համարեցինք կրկնել եւ այդ մանրամասնութիւնները հաշվի առնել.



ԶՈՒՄՐԵՆՈՅԻ ԸՆՎԱԼԱԴԻՆԸ



Съверный придѣль.

Հիւսիսային կողմ.

Die nördliche Abteilung.



Южный придѣлъ.

Հարավային կողմ.

Die südliche Abteilung.



Восточ. придѣль и купель.

Արևել. կողմ և աշտղան.

Die östl. Abteil. u. d. Taufbecken.



Алтарь.

Ալդան.

Der Altar.


Sυμμωτ. V. Tabl.



Мозаика и рака.

Մոզաիկ և գլուխ.

Der Mosaik und die Lade.



Пристройка съ востока.

Արևելեան շինուածք.

Der östliche Anbau.



Внутренній видъ стѣны

Պատը ներսից.

Die Wand von Innen.

Sariss. VIII. Tabl.



Базы и капители.

Івапрієві *Л.* *Іонющі.*

Die Basen und die Kapitele.

Տապա. IX. Tabl.



Орнаменты.

Զարդերի բեկորներ.

Ornamentfragmente.

Sariss. X Tabl.

№ 1.



Орлы, онаграммы.

№ 2.



№ 3.



№ 4.




Die Adler, Anogrammata


Արծիւ և Արծանադրութեալք

Nº 5.

Syria. XI. Tabl.




Nº 6.




Nº 7.






№ 9.



Надписи.

Գրութիւնք.

Inschriften.



لـ ٦٠٠٠
 لـ السـنـةـ ١٣ـ عـلـيـ
 وـ الـهـ وـسـلـ وـكـلـ
 دـعـوـ مـحـمـدـ الـهـ
 كـوـلـ عـرـاـقـ وـهـنـهـ وـدـوـ دـلـعـصـهـ

Надписи.

Գրութիւնք.

Inschrifte

Ե Ա Ր Ե Ր Գ Կ Ո Վ Ո Վ Ի Յ
 Ո Ր Ա Դ Ա Կ Ա Մ Ա Վ Ո Ր Ա Վ Ե Յ
 Հ Ա Մ Ա Վ Ո Ր Ա Վ Ե Յ Հ Ա Մ Ա Վ Ո Ր Ա Վ Ե Յ
 Հ Ա Մ Ա Վ Ո Ր Ա Վ Ե Յ Հ Ա Մ Ա Վ Ո Ր Ա Վ Ե Յ

№ 12.



№ 13.

Մ Տ Օ Խ Ա Ծ Ծ Հ
 Օ Ք Տ Ա Ն Կ Ի Ծ Մ Ե Վ
 Օ Ւ Ժ Վ Ե Ւ Ղ Ա Բ

№ 10.

Sarafan. XV. Tabl.



Св. Эгміадзинъ.

Ս. Եղմանձին.

Das hl. Etschmiadzin.

Տախտ. XVI. Tabl.



Св. Рипсимэ.

Ս. Հովհաննէս.

Das Kloster Ripsime.